

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Ամերիկայի Համար Յրեշը, Իրանի Համար Յերոս

Վերջին շաբաթներուն Միացեալ Նահանգներ-Իրան հակամարտութիւնը հասաւ իր գագաթնակետին ու եղաւ պահ, երբ կողմերուն միջեւ պատերազմը կը նկատուէր անխուսափելի:

Յունուար 3-ին, նախագահ Տանտը Թրամփի հրամանով Ամերիկեան անօդաչու սարքերը Պաղտատի օդակայանի մօտ սպաննեցին Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործողութիւններու յատուկ ստորաբաժանունը նկատուող «Քուստ» զօրքերու երկարամեայ հրամանատար Քասէմ Սոլէյմանի, որ կը նկատուէր Իրանի երկրորդ ամենէն զօրաւոր անձնակազմը: Իրանի արտաքին գործերու նախարար Մուսթաֆա Յաճաբադը իր համարեց անօդաչուի ինքնաթիռը հարձակումը:

Թրամփի իր այս քայլը արդարացուց յայտարարելով, որ Սոլէյմանիի ձեռքերը թաքախուսած են Ամերիկացի զինուորներու արիւնով, որոնք մահացած էին Իրաքեան պատերազմին յաջորդող ժամանակաշրջանին, Ամերիկեան բանակին դէմ յարձակումներու ընթացքին, որոնք կը կատարուէին Սոլէյմանիի հրամանով գործող Շիի միլիցիաներու կողմէ: Նաեւ, Թրամփի Սոլէյմանիին մեղադրեց Պաղտատի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանատան վրայ ամբոխի կողմէ վերջերս կատարուած յարձակումը կազմակերպելու մէջ:

Քասէմ Սոլէյմանիի սպանութեան գործողութիւնը դժգոհութիւն յառաջացուց, ոչ միայն Իրաքի կառավարութեան մօտ, որ այժմ կը պահանջէ Ամերիկեան զօրքերու հեռացումը իր հողերէն, այլեւ Գոնկրէտէն ներս, ուր դարձեալ բողոքներ կը բարձրանան, որ Թրամփի դուրս եկած է իր լիազօրութիւններէն, երբ առանց օրէնսդիր մարմինի հաւանութեան, դիմած է ռազմական քայլերու, որոնք կրնան երկիրը տանիլ դէպի նոր պատերազմ:

Ամերիկայի մէջ բոլորը համաձայն են, որ Սոլէյմանի հրէշ մըն էր եւ գլխաւոր դերակատարներէն մէկը՝ Միջին Արեւելքի երկիրներէն ներս տեղի ունեցող ակտներուն ու արհիւնահոսութեան: Սակայն, վարչակազմի քննադատներու կարծիքով Սոլէյմանիի հրապարակէն հեռացումով հարցերը չեն լուծուիր, այլ, ակելի եւս կը բարդանան, մղելով իրանը ծայրայեղ քայլերու:

Քասէմ Սոլէյմանի, իր կենդանութեան իսկ կը նկատուէր իր երկրի հերոսներէն մէկը, իսկ մահուանէ ետք՝ առաւել եւս: Անոր սպանութիւնը արժանացաւ մեծ արձագանգի: Իրանի ղեկավարները անմիջապէս յայտարարեցին, որ անպայմանօրէն պիտի լուծեն Սոլէյմանիի վրէժը ու այսու-

Հայաստանի Մէջ Նշուեցաւ Պաքուի Չարդերու 30-Ամեակը

Պաքուի մէջ հայերու դէմ կազմակերպուած կոտորածներու 30-ամեակին առթիւ, Յունուար 13-ին, վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ ընկերակցութեամբ Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի, Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյեանի եւ բարձրաստիճան ալ պաշտօնեաներու այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր՝ յարգանքի տուրք մատուցելու ոճրագործութեան զոհերու յիշատակին:

Վարչապետը ծաղկեպսակ գետեղեց եւ ծաղիկներ խոնարհեց զոհերու յիշատակը յաւերժացնող յուշարձաններուն:

«30 տարի առաջ միջազգային հանրութիւնն ակնատես եղաւ ու դատապարտեց Պաքուի մէջ հայ բնակչութեան Չարդերը, ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը՝ Պաքուի հակահայկական Չարդերու 30-րդ տարելիցի կապակցութեամբ իր խօսքին մէջ:

«Դէպքերէն 30 տարի անց Ատրպէյճանի մէջ գոյութիւն չունի Պաքուի հակահայկական Չարդերու զոհերու հանդէպ որեւէ յարգանք եւ կարեկցանք: Այն սակաւաթիւ ձայները, որոնք քաջութիւն ունեցած են անգամ գրական ստեղծագործութիւններու մէջ յիշատա-



Պաքուի կոտորածներու 30-ամեակին առթիւ Հայաստանի քաղաքական եւ կրօնական առաջնորդները կ'այցելեն Ծիծեռնակաբերդի յուշահամալիր

կել Պաքուի հայերուն բաժին հասած ողբերգութիւնը, դամուած են անարգանքի սիւնին եւ պաշտօնապէս հռչակուած են դաւաճան:

Անգամ այսօր անօդնական մարդկոց հանդէպ հաշուեյարդար տեսած Չարդարարները կը դասուին Ատրպէյճանի հերոսներու շարքին, իսկ անոնց գործած ոճիրները

կը համարուին Ատրպէյճանի ինքնիշխանութեան եւ տարածքային ամբողջականութեան դէմ պայքարի փառապանծ էջ:

«Այսօր, մենք մեր երախտագիտութիւնը կը յայտնենք բոլոր միջազգային կառույցներուն եւ

Շաբ.ը էջ 5

Տեղի Ունեցաւ Պոլսոյ Հայոց Նորընտիր Պատրիարքի Գահակալութեան Արարողութիւնը



Պոլսոյ նորընտիր պատրիարք Սահակ եպս. Մաշալեանի գահակալութեան արարողութեան ընթացքին

Յունուար 11-ին, Պոլսոյ աթոռանիստ հայկական Սուրբ Աստուածածին Մայր տաճարին մէջ տեղի ունեցած է Պոլսոյ նորընտիր պատրիարք Սահակ եպս. Մաշալեանի գահակալութեան արարողութիւնը:

Ժամերգութեան ժամանակ Սահակ Բ. անուանուած Սահակ եպս. Մաշալեանը երզում տուած է, ստացած է իր պատրիարքական ձեռնափայտը եւ գահ բարձրացած:

Հանդիսութեանը ներկայ եղած են Հայ առաքելական եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու ներկայացուցիչները, կաթողիկ

եւ հայ կաթողիկ համայնքներու առաջնորդները, Յունաց պատրիարքը, հրէական համայնքի կրօնապետը, ասորական կաթողիկ եւ ուղղափառ եկեղեցիներու հովուապետերը, Թուրքիայի ներքին գործերու նախարարութեան եւ Ստամբուլի նահանգապետարանի ներկայացուցիչներ, օտարերկրեայ դիւանագէտներ, հիւրեր:

Մաշալեան սրբազանը թափօրի ուղեկցութեամբ հանդիսաւոր կերպով մուտք գործած է մայր եկեղեցի: Այնուհետեւ տեղի ունեցող

Հայաստան Աշխարհի Յետ Պիտի Կապուի 17 Նոր Ուղղութիւններով. Ryanair-ի Առաջին Վայրէջքը՝ Զուարթնոց

Յունուար 14-ին, «Զուարթնոց» օդակայան վայրէջք կատարած է Ryanair-ի Միլան-Երեւան-Միլան առաջին թռիչքով Հայաստան ժամանած օդանաւը:

Ժամանած հիւրերը օդակայանին մէջ դիմաւորած են Հայաստանի Քաղաքացիական օդադնացութեան կոմիտէի նախագահ Տաթևիկ Ռեւազեանը եւ ՀՀ տնտեսութեան նախարարութեան Զբօսաշրջութեան կոմիտէի ղեկավար Սուսաննա Սաֆարեանը:

Ryanair ընկերութիւնը Յունուար 3-ին սկսած է տոմսերու վաճառքը եւս 2 նոր ուղղութիւններու համար՝ Գիւմրի-Աթենք եւ Երեւան-Սալոնիք: Տաթևիկ Ռեւազեանը յայտնած է նաեւ, որ Հայաստանն աշխարհի հետ պիտի կապուի ոչ թէ 7, այլ 17 նոր ուղղութիւններով:

Օդանաւային ընկերութիւնը դէպի Երեւան թռիչք իրականացուցած է նաեւ Հոնոնգը, որ ժամանած էր գիշեր:

Իտալիոյ Օդային երթեւեկութեան գործադուլին պատճառաւ թռիչքը ունեցած է 4 ժամը ուշացում:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Յեղափոխութիւնը Կ'ենթադրէ 180 Աստիճանի Շրջադարձ, Բայց Առայժմ Այն Չենք Տեսներ» Արկադի Վարդանեան

«Ընդհանուր առմամբ իշխանութեան աշխատանքը դրական եմ գնահատում անցնող տարում: Տեղի ունեցաւ այն տեղաշարժը, որին ժողովուրդը սպասում էր վերջին երկու տասնամեակում: Ժողովրդի ծարաւը յագեցուեց», - «Առաջին լրատուական»-ի հետ զրոյցի ժամանակ ամփոփելով անցնող տարին, ըսած է քաղաքագէտ Արկադի Վարդանեանը: Այն, սակայն, ատոր հետ մէկտեղ իշխանութեան աշխատանքին մէջ շատ շօշափելի բացթողումներ կը տեսնէ, որոնցմէ ամենակարեւորը կը համարէ այն, որ իշխանութեան կողմէ այդպէս ալ չհնչեց իրաւաքաղաքական գնահատական «նախկին յանցաւոր իշխանութեան վերաբերեալ»: «Չստուեց, որ, օրինակ, այսուհետեւ ՀՀ-ն ընկալուած է ոչ թէ որպէս քաղաքական կուսակցութիւն, այլ որպէս կազմակերպուած յանցաւոր խմբաւորում, որը իր իշխանութեան տարիները օրօք բազմաթիւ յանցագործութիւններ է իրականացրել Հայաստանի, հայ ժողովրդի եւ Հայաստանի պետականութեան դէմ: Դրանով վերջ կը դրուէր բոլոր այն վայրահաչոցներին, որոնք մինչ օրս շարունակուած են աշտոնեաններին, շարժագանակներին եւ այլոց կողմից: Նրանք այլեւս չէին վայրահաչոց, քանի որ այլեւս ցանկացած վայրահաչոցով կ'ընկալուէր որպէս օրէնքի կոպիտ խախտում՝ համապատասխան հետեւանքներով: Դա չանելը, անշուշտ, իշխանութեան կողմից մեծ բացթողում էր», - ըսած է Վարդանեանը:



Քաղաքագէտ Արկադի Վարդանեան

գրիկ Յարութիւնեանի գլխաւորութեամբ: Այդ կառուցը հյու-հնազանդ դակում էր իշխանութեան կողմից կատարուած յատկապէս ընտրական յանցագործութիւնները, եւ ժողովրդին դա մատուցուած էր որպէս օրինական գործընթաց: Մի-ն տարիներ շարունակ օրինականացրել է իշխանութեան յանցագործութիւնները, որը ծանրագոյն յանցագործութիւն է: Ես կարծում եմ, որ իշխանութիւնները շատ են յապաղում եւ շատ հրատապ լուծումներ պահանջող հարցերի դէպքում են յապաղում» - ընդգծած է Վարդանեանը:

«Ցանկացած յեղափոխութիւն ենթադրում է 180 աստիճանի շրջադարձ, բայց մենք առայժմ դա չենք տեսնում: Դա դեռ շօշափելի չէ, որն էլ ժողովրդի մօտ տարակուսանք է առաջացնում, եւ այդ տարակուսանքը քայլ առ քայլ վերածուած է անընդունելիութեանը, որը շատ վտանգաւոր է: Մեր իշխանութիւնները պէտք է այս ուղղութեամբ խոր մտածեն եւ քայլեր ձեռնարկեն», - եզրափակած է Վարդանեանը:

Հայաստանէն Արտաաղթի Ալիքը Կ'ընթանայ Դեպի Նուազում

Ազգային վիճակագրական կոմիտէն հրապարակած է տուեալներ եւ արձանագրած, որ 2019 թուականին նորանկախ Հայաստանի ամենացած թիւը գրանցուած է՝ 2 միլիոն 965 հազար մարդ: Ինչո՞վ պայմանաւորուած է բնակչութեան այս նուազումը. «Առաջին լրատուական»-ի հարցին ՀՀ աշխատանքի եւ ընկերային հարցերու նախարարութեան ժողովրդագրութեան բաժնի պետ, ժողովրդագրագէտ Արտակ Մարկոսեանը պատասխանած է. «1990 թուականի տուեալներով՝ Հայաստանում բնակչուած էր մօտ 3 միլիոն 514 հազար մարդ, որը նորանկախ Հայաստանի պատմութեան մէջ ամենաբարձր ցուցանիշն է: Նշեմ, որ 1921 թուականին, երբ մենք միանում էինք Խորհրդային միութեանը, Հայաստանում ապրում էր 770 հազար մարդ, իսկ 1926 թուականին այդ թիւը հասաւ 881 հազարի: 1926-1990 ժամանակահատուածում Հայաստանի բնակչութեան թիւն աճել էր մօտ 4,7 անգամ: Այո, այդ ժամանակահատուածում մենք ունեցանք բաւականին լաւ աճ: Պէտք է նշեմ, որ թէեւ

հայրենադարձութիւնն էլ այդ ժամանակ դեր խաղաց բնակչութեան թուաքանակի աճի վրայ, բայց հիմնականում այն պայմանաւորուած էր բնական աճի բարձր ցուցանիշով:

Արտագաղթը չէր սկսուել 1991 թուականին, 1980 թուականից սկսած Հայաստանն արդէն գաղթի բացասական պատկեր ցոյց տուող երկիր էր: Այսինքն՝ արտագաղթին արդէն սկսել էր, եւ անկախ նրանից՝ Խորհրդային միութիւնը կը փլուզուէր, թէ ոչ, այն շարունակուելու էր, քանի որ Հայաստանում եղած աշխատատեղերը չէին բաւարարում այն մարդկանց, որոնք մտնում էին աշխատաշուկայ: Այսինքն՝ մենք 1950-60-ական թուականներին ունեցել ենք բաւականին բարձր ծնելիութիւն, եւ այդ թուականներին ծնուած մարդիկ 1980-ականներին մտան աշխատաշուկայ, սակայն աշխատատեղերն արդէն քիչ էին ստեղծուած, եւ երիտասարդութիւնը սկսել էր Հայաստանից հեռանալ Խորհրդային միութեան այլ հանրապետութիւններ»:

2019-ին Հաւաքուած Հարկերու Գումարը 20% Գերազանցած Է 2018-ի Գումարները

Եւրասիական տնտեսական միութեան (ԵԱՏՄ) կարգաւորումներով մաքսագերծման դրոյքաչափերու բարձրացման նախորդած տարուան Հայաստան ներկրուած է գրեթէ 190 հազար մեքենայ, որոնց համար ներկրողները 95 միլիաոն դրամ հարկ մուծած են: Անցած տարի 2018-ի համեմատ ներկրուած մեքենաներու քանակը շուրջ 3 անգամ աւելի է:



ՊԵԿ-ի Ուխտագահ Դաւիթ Անանեան

Ընդհանուր առմամբ, 2019 թուականին Հայաստանի մէջ աւելի քան մէկ ու կէս թրիլիոն դրամ հարկ վճարած են, որմէ մօտ 43 միլիաոն դրամը Պետական եկամուտներու կոմիտէն (ՊԵԿ) վերադարձուցած է տեպեթային, «հին պարտքերը»:

2018-ի համեմատ, հաւաքագրուած հարկերու աճը, ՊԵԿ-ի նախագահ Դաւիթ Անանեանի ներկայացմամբ, 20 տոկոսէն աւելի է. - «Մեր նպատակը ոչ թէ ծրագրային ցուցանիշները կատարելն է, այլ ծրագրային ցուցանիշներու համեմատ, իրական կեանքի համեմատական տալն է: Այլ կերպ ըսած՝ մենք ուղղակի կ'օգնենք հարկ վճարողներուն, որպէսզի իրենք ամբողջ ծաւալով յայտարարագրէն իրենց հարկային եկամուտները»:

Թեան հետեւանքով մեր հարկ վճարողներու հետ միասին մենք կրցած ենք այնքան հարկեր մուտքագրել, որ կազմած է 2017 թուականի փաստացի ցուցանիշի նկատմամբ 44 տոկոսի աճ»:

Տօնական օրերուն Հայաստանի մէջ, անցեալ տարուան նոյն ժամանակահատուածի համեմատ, 32 տոկոսով աւելի Հսկիչ-դրամարկղային մեքենայի (ՀՏՄ) կտրոն տպուած է. - «Մօտաւորապէս 10,5 միլիոն ՀՏՄ կտրոն տրամադրուած է նախորդ տարուան, եթէ չեմ սխալիր, 7 ու քանի միլիոնի փոխարէն: Շուրջ 22 տոկոս աւելցած է շրջանառութիւնը»:

Անանեանի խօսքով, 2020-ին հաւաքագրուելիք գումարները, իրենց պատկերացմամբ, շատ աւելին կը կազմեն, քան նախատեսուած է պետական պիւտձէով:

Անանեանի վստահեցմամբ՝ քաղաքացիները հարկեր վճարելու հարցով հետաքրքրուածութիւն կը դրսեւորեն: Ան ըսած է, թէ մարդիկ տարիներ շարունակ չեն մտածած որ այդ իրենց իրաւական պարտականութիւնն է»:

Ան յիշեցուցած է, որ դեռ յեղափոխութենէն առաջ վարչապետ Փաշինեանը յայտարարած էր, որ պիւտձէթային եկամուտները 30-40 տոկոսով աւելցնելու հնարաւորութիւն կայ. - «Եկէք արձանագրենք, որ 2018 եւ 2019 թուականներու փաստացի գործունէութիւնը»:

Վլատիմիր Կարապետեան Ազատուած Է Վարչապետի Խօսնակի Պաշտօնէն

Վարչապետ Նիկոլ Փաշինեանի մամուլի քարտուղար Վլատիմիր Կարապետեանը գրառում ըրած է՝ տեղեկացնելով, որ կը ձգէ այդ պաշտօնը:



Վարչապետ Նիկոլի մամուլի քարտուղար Վլատիմիր Կարապետեան

«Այսօրուրնէ այլեւս չեմ կատարեր վարչապետի մամուլի քարտուղարի պարտականութիւնները: Վարչապետ Փաշինեանի գրասենեակին մէջ աշխատելու այս մէկ տարին գերազանց փորձ էր: Ինչպէս խոստացած էի նշանակումէս առաջ՝ գործս կատարած եմ սիրով ու նուիրումով: Շնորհակալ եմ», - գրած է Կարապետեանը:

Վլատիմիր Կարապետեանին ազատել վարչապետի մամուլի քարտուղարի պաշտօնէն»:

Վարչապետի համապատասխան որոշումը հրապարակուած է egov.am կայքին մէջ. «Ղեկավարուելով «Հանրային ծառայութեան մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի 9-րդ յօդուածի 10-րդ մասով:

Հայաստանի Տնտեսական Աճի Կանխատեսումները Կայուն Են

Համաշխարհային դրամատան 2020 թուականի ընդհանուր տնտեսական հեռանկարներ (GEP) յունուարեան գեկոյցի համաձայն՝ թէեւ տնտեսական աճի շարժերը Հարաւային Կովկասի մէջ նուազման միտում ունին, սակայն Հայաստանի աճի կանխատեսումները կայուն բնույթ կը կրեն՝ ի տարբերութիւն հարեւան երկիրներէ:

Մասնաւորապէս, 2020-ի համար կը կանխատեսուի 5,1 տոկոս, 2021 եւ 2022-ին՝ 5,2 տոկոս աճ, նշուած է Համաշխարհային դրամատան հայաստանեան գրասենեակի ֆէյսպուքեան էջին մէջ հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

ԼՈՒՐԵՐ

Սահմանադրական Բարեփոխումներու Յանձնաժողովը Պիտի Սկսի Գործել

Վարչապետի որոշմամբ սկսած է սահմանադրական բարեփոխումներու մասնագիտական յանձնաժողովի ստեղծման գործընթացը: Յանձնաժողովը կազմուած պիտի ըլլայ 15 անդամէ, կազմին մէջ ի պաշտօնէ պիտի ընդգրկուին արդարադատութեան նախարարը եւ Մարդու իրաւունքներու եւրոպական դատարանի մէջ Հայաստանի ներկայացուցիչը, Մարդու իրաւունքներու պաշտպանը, բացի այդ, դատաւորներու ընդհանուր ժողովի 1 ներկայացուցիչ, 6 գիտնական անդամ, հասարակական կազմակերպութիւններու 2 ներկայացուցիչ, մէկական ներկայացուցիչ ալ խորհրդարանական իւրաքանչիւր խմբակցութիւն պիտի ունենայ:



եւ այդ կամքը կեանքի կոչելու եւ ունենալու այնպիսի Սահմանադրութիւն, որ վաղը, միւս օրը որեւէ մէկի համար, որեւէ ուժի համար խնդիր չլինի քաղաքական գործընթացներում մասնակցութեան եւ խնդիր չգառնայ, որ երկրում նորից յեղափոխութեան կարիք ու անհրաժեշտութիւն լինի», - ըսած է ան:

Իշխանական «Իմ քայլէն» վահագն Յովակիմեանն ըսած է՝ խմբակցութեան մէջ դեռ չեն քննարկած, թէ՛ ներկայացուցիչի հարցը, թէ՛ օրակարգի հարցը: Ան իր անձնական կարծիքը յայտնած է՝ Սահմանադրութեան պէտք է հանել անձերը. - «Քանի որ նախկինում անձերով պայմանաւորուած է գրուել թեքութիւն, պէտք է թեքութի մէջից հանել անձերին, այսինքն՝ այս ամէնը պիտի արուի, բայց միեւնոյն ժամանակ, օրինակ, երբ յանձնաժողովը ձեւաւորուի, ընդհանուր բանավէճը գնալու է, ես համոզուած եմ, որ՝ նախագահական, խորհրդարանական, թէ՛ կիսանախագահական, այսինքն՝ այս 3 կառավարման մոտեցումներից որով է Հայաստանը շարունակելու իր զարգացումը»:

Սահմանադրական բարեփոխումներու յանձնաժողովը պիտի սկսի աշխատիլ ֆետրուար ամսուան ընթացքին

Ազգային ժողովի ամենամեծ ընդդիմադիր խմբակցութիւնը՝ «Բարգաւաճ Հայաստան», հարցը դեռ չէ քննարկած:

«Լուսաւոր Հայաստանը» պիտի մասնակցի Սահմանադրական բարեփոխումներու մասնագիտական յանձնաժողովի աշխատանքներուն: Թէ՛ ո՞վ պիտի ըլլայ անոնց ներկայացուցիչը, ըստ խմբակցութեան ղեկավար Էտմոն Մարուքեանի, պիտի որոշեն ապագային: Ի՞նչ օրակարգով պիտի մասնակցին, Մարուքեանի խօսքով՝ ընդդիմութեան կողմէ դեռ Սերժ Սարգսեանի կառավարման ժամանակ քաղաքական օրակարգ դարձած խնդիրները պէտք է լուծուին: Մարուքեանը պարբերաբար կը յայտարարէ, որ սուփրը վարչապետական համակարգը յեղափոխութեան էտք ալ, ըստ էութեան, կը շարունակուի պահպանուիլ: Կը կարծէ՝ եթէ մնայ միանձնեայ քաղաքական կառավարման համակարգը, դարձեալ ցնցումներ պիտի ըլլան:

«Հիմա կայ առիթ այդ մոտոփոխ քաղաքական համակարգը վերափոխելու, դրա քաղաքական կամքն այսօրուայ վարչապետը յայտարարել է, որ ունի, մենք էլ պատրաստ ենք նրա հետ լծուելու»

Քոչարեանի Դատը Դարձեալ Յետաձգուեցաւ Փաստաբանի Բացակայութեան Պատճառով

Երեւանի ընդհանուր իրաւասութեան դատարանը՝ նախագահութեամբ դատաւոր Աննա Դանիբեկեանի, (Շենգաւիթի նստավայր) մեկնարկած է ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի եւ միւսներու գործով հերթական նիստը:

Դատարանի դահլիճ մուտք գործած Ռոպերթ Քոչարեանին դատարանին մէջ ներկայ քաղաքացիներու մէկ մասը դիմաւորած է բացականչութիւններով ու ծափահարութիւններով, միւս մասն ալ՝ «ամօթ, ամօթ» վանկարկումներով:

Քանի մը քաղաքացիներ ծափահարութիւններով դիմաւորած են նաեւ դատաւոր Աննա Դանիբեկեանը: Ան յայտարարած է որ, նիստէն ամիջապէս առաջ ստացած են Եուրո խաչատուրովի փաստաբան Միհրան Պողոսեանի դիմումը: «Հաշուի առնելով, որ դատարանը այս գործի քննութեան ընթացքում չի ապահովում մրցակցութեան սկզբունքը, պաշտպանութեան կողմը գտնուած է խիստ անբարենպաստ պայմաններում եւ փաստաբանների հասցէին սպանուած հարազատ ունենալու սպառ-

նալիքի վերաբերեալ դատարանի կողմից որեւէ գործողութիւն չի իրականացուած, երբ պաշտպանները միջնորդութիւնների վերաբերեալ կարծիք յայտնելու հնարաւորութիւնը դատաւարութեան որոշ մասնակիցներ օգտագործում են վիրաւորելու համար, եւ դատարանը կրկին որեւէ միջոց չի ձեռնարկում սոյն գործողութիւնները կանխելու համար, ինչի պատճառով պաշտպանական կողմը գրկուած է պաշտպանութիւն իրականացնելու ողջամիտ ու իրական հնարաւորութիւնից, ուստի Միհրան Պողոսեանը յայտնում է, որ չի ներկայանալու սոյն դատական նիստին՝ հայցելով բոլոր այն անձանց ներողամտութիւնը, ովքեր սոյն գործի քննութեան ընթացքում ցուցաբերել են պատշաճ վարքագիծ», - դիմումը ընթերցած է դատաւորը: Դանիբեկեանն ըսած է, որ նիստէն ետք ուսումնասիրած են նախորդ նիստի արձանագրութիւնը: «Որեւէ սպառնալիք կամ արտադրարարութիւն՝ կապուած սպանուած հարազատ ունենալու հետ, չի արձանագրուել, դատարանը որեւէ հիմք չունի արձանագրել, որ պաշտ-

Սասնաւոր Ոլորտին Մէջ Զբաղուածներու Թիւն Աւելցած Է 40 Հազարով

Հայաստանի մէջ 2019 թուականի 9 ամսուան արդիւնքներով մասնաւոր հատուածի մօտ զբաղուածներու թիւն աւելցած է 40 հազարով: «Արմէնբրես»-ի հաղորդմամբ՝ հրաւիրուած ասուլիսի ժամանակ այս մասին յայտնած է ՀՀ տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեանը:

«9 ամսուայ արդիւնքներով մասնաւոր հատուածում զբաղուածութիւնը, ըստ պաշտօնական թուերի, ունի 40 հազարով աճ: Դրանցից 5 300-ը վերաբերում են մշակող արդիւնաբերութեանը, 12 400-ը՝ մեծածախ եւ մանրածախ առեւտրին, 4 300 աշխատատեղ աւելացել է կացութեան եւ հանրային սննդի ոլորտում», - ըսած է Խաչատրեանը:

2 300 աշխատատեղ աւելցած է նաեւ կապի եւ տեղեկատուութեան ոլորտին մէջ, 2 100 աշխատատեղ՝ տեղեկատուական արհեստագիտութեան ոլորտի մէջ եւ 2 700-ը՝ այլ ծառայութիւններու մէջ:

2019 թուականին արտահանման աճը պիտի ըլլայ 9-10 տոկոսի սահմաններուն մէջ, ըսած է Տիգրան Խաչատրեանը:

«Մենք արդէն 11 ամիսների արդիւնքում ունենք 9 տոկոս արտահանման աճ: Դրանք շարունակուած են լինել այն ուղղութիւնները, որոնք տարեկանից առանձնանում էին որպէս արտահանման առաջատար ուղղութիւններ: Քոնեակի արտահանումն աճել է 26,7 տոկոսով, ծխախոտը՝ 9, պղնձի խտանիլթը՝ 16,8, շոքոլատի արտահանումը՝ 14,6, մրգային գինիները՝ 75 տոկոսով, խաղողի գինիները՝ 26 տոկոսով: Սրանք մի քանի ապրանքախմբեր էին, որոնք ընդգծուած առաջատար ազդեցութիւն են թողել ընդհանուր արտահանման աճի վրայ: Եւ մենք կանխատեսում ենք, որ տարուայ արդիւնքներով արտահանումը հանրագումարով կը լինի



ՀՀ տնտեսութեան նախարար Տիգրան Խաչատրեան

9-10 տոկոսի սահմաններում», - ըսած է նախարարը:

Տիգրան Խաչատրեանը նշած է, որ 2020 թուականի համար եւս լաւատեսական կանխատեսումներ կան: «Կարծում ենք, որ 2020 թուականին եւս մենք ունենալու ենք արտահանման 10 տոկոսանոց աճ: Այսինքն՝ արտահանումը շարունակելու է լինել մեր մշակուող արդիւնաբերութեան այն քաշող ուժը, որ պէտք է նպաստի տնտեսութեան ընդհանուր աճին», - աւելցուցած է ան:

2020 թուականի համար կառավարութիւնը ներդրումներու աճ կը սպասէ, ասուլիսի ժամանակ ըսած է տնտեսութեան նախարարը:

Ըստ նախարարի՝ ներդրումներու 2019 թուականի ցուցանիշը դեռ այն չէ, որ կառավարութեան նպատակներուն մէջ կայ: Բայց, ըստ անոր, կառավարութիւնը վստահ է, որ 2020 թուականի ցուցանիշն արդէն էականօրէն տարբեր պիտի ըլլայ նախորդ տարուէն:

2019 Թուականի Տուեալներով Հայաստանէն Սեկնողներու Թիւը 9 Հազար 467-ով Աւելի Եղած Է Ժամանողներու Թիւէն. Վարչապետ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը ֆէյսպուքեան իր էջին մէջ ուշադրաւ թիւեր հրատարած է՝ վերջին տարիներու ընթացքին Հայաստանէն մեկնող եւ Հայաստան ժամանող քաղաքացիներու թիւի վերաբերեալ:

«2019 թուականին Հայաստան է ժամանել 5 միլիոն 339 հազար 796 մարդ:

2018 թուականին Հայաստան է ժամանել 4 միլիոն 785 հազար 875 մարդ:

2017-ին Հայաստան է ժամանել 4 միլիոն 373 հազար 117 մարդ:

2017-ի համեմատ 2019-ին Հայաստան է ժամանել 966 հազար 679-ով, կամ 22,1 տոկոսով աւել մարդ:

Նշեմ, որ 2019 թուականի արդիւնքներով Հայաստանից մեկնողների թիւը 9 հազար 467-ով աւել է եղել ժամանողների թուից:

2018 թուականի արդիւնքներով Հայաստանից մեկնողների թիւը ժամանողներից աւել է եղել



11 հազար 882-ով:

2017 թուականի արդիւնքներով, ուշադրութիւն, Հայաստանից մեկնողների թիւը ժամանողների թուից աւել է եղել, կրկին ուշադրութիւն, 133 հազար 826-ով:

Յ.Գ. Այս հաշուարկում միեւնոյն անձի բազմակի այցելութիւնները հաշուառուած չեն: Միեւնոյն անձի բազմաթիւ մեկնում-ժամանումներից հաշուի է առնուած միայն մէկը», - գրած է վարչապետը:

պանական կողմի նկատմամբ եղել է սպառնալիք», - ըսած է դատաւորը՝ ինչին հետեւած են ծափահարութիւններ:

Մեղադրող դատախազը փաս-

տաբանի քայլը ակնյայտ ցուցադրական որակեց:

Նիստը յետաձգուած է: Յաջորդ նիստը նշանակուած է Յունուար 21-ին, ժամը 13:00-ին:

Լուսինե Սահակեանի «Համշէնը Հայկական Ձեռագրերում» Հատորի Ներկայացումը Տեղի Ունեցաւ Ապրիլ Գրատունէն Ներս

Յունուար 9-ի երեկոյեան, Կլէն-տէյլի Ապրիլ գրատունէն ներս տեղի ունեցաւ Լուսինե Սահակեանի «Համշէնը Հայկական Ձեռագրերում» Գրքի Ներկայացումը, գրասէր ունկնդիրներու ներկայութեան:

Երեկոյի բացման խօսք կատարելով հրատարակչատան տնօրէն Արնօ Երէցեան ներկայացուց օրուայ յայտագրին մասնակցողները: Առաջին հերթին հրահրուեցաւ քիմիական ճարտարագէտ եւ հասարակական գործիչ՝ Յարութ Պրոնոգեանը, որ ամփոփ գիծերու մէջ ներկայացուց հեղինակի կենսագրական գիծերը:



Հեղինակ Լուսինե Սահակեան ելոյթ կ'ունենայ Ապրիլ գրատունէն ներս

ներու մատենադարաններէն ներս: Համշէնի բարբառը շատ մօտ եղած է Հայերէնին, ինչ որ անառարկելիօրէն կու գայ փաստելու որ Համշէնի ժողովուրդը եղած են Քրիստոնեայ հայեր, որոնք հետագային բռնի դարձած են կրօնափոխ եւ այժմ ընդհանրապէս կը մերժեն իրենց հայկական ինքնութիւնը:

Հեղինակը նաեւ իր այցելութիւններու ընթացքին կատարած է նկարահանումներ, զանոնք վերածելով վաւերագրական ժապաւէնի:

Տիկին, Սահակեան նաեւ անդրադարձաւ վերջին շրջանի թրքական ազգայնական շրջանակներուն կողմէ իր դէմ սկսած արշաւին, որ իր վերջին այցելութեան ընթացքին վերածուած են սպառնալիքներու, մղելով գինք արագօրէն հեռանալու թուրքիայէն:

Հարց ու պատասխանի ընթացքին Լուսինե Սահակեան տեղեկացուց, որ մի քանի հարիւր հազար Համշէնահայեր կ'ապրին ներկայիս Ռուսաստանի եւ Աբխազիոյ մէջ, որոնք կը պահեն իրենց կրօնքն ու լեզուն ու կառչած են իրենց արմատներուն:

Փրոֆ. Մարտիրոսեան նաեւ շեշտեց այն գիտական մօտեցումը, որ ցուցաբերած է հեղինակը, պատրաստելով նաեւ անձնանուններու ցուցակ, ինչ որ առիթ կու տայ ապագայ պրոյեկտներուն եւ պատմաբաններուն, առանց մեծ դժուարութեան օգտագործելու Լուսինե Սահակեան հարուստ ուսումնասիրութեան բովանդակութիւնը եւ տեղեկութիւնները:

Հեղինակ Լուսին Սահակեան սահիկներու միջոցաւ ներկայացուց օրինակներ Համշէնի հայերէնով 15-էն 17-րդ դարերու ընթացքին գրուած ձեռագիր հատորներէն, որոնք ներկայիս կը գտնուին Երեւանի Մաշտոցի անուան մատենադարանի, Երուսաղէմի Պատրիարքարանի եւ Վենետիկի ու Վիէնայի Միխիթարեան միաբանութիւն-

Տեղի Ունեցաւ Պոլսոյ Հայոց

Շարունակուած էջ 1-էն

ցած է անոր երդման արարողութիւնը եւ ասայի՝ պատրիարքական գաւազանի յանձնումը:

Գահակալման հանդիսութեան ժամանակ կաթողիկոսական կոնդակով Սահակ Մաշալեանին շնորհուեց արքեպիսկոպոսի աստիճան: Գահակալման արարողութիւնէն յետոյ տեղի ունեցաւ ընդունելութիւն, ներկաները շնորհաւորեցին ու յաջողութիւն մաղթեցին պատրիարքին իր ծառայութեան մէջ: Կիրակի օրը իր առաջին պատ-

գամով պատրիարքը Սուրբ ծննդեան աւետիսը տուաւ՝ երախտագիտութիւն յայտնելով հաւաքուածներուն այս յիշարժան օրը իր հետ կիսելու համար:

Հարիւրաւոր հաւատացեալներ ողջունեցին պատրիարքին՝ ստանալով անոր հայրական օրհնութիւնը: Պատարագի ժամանակ Պոլսոյ Սահակ Երկրորդ պատրիարքի անունը առաջին անգամ յիշատակուեցաւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Մեծի Տան Կիլիկիոյ կաթողիկոսի եւ Երուսաղէմի պատրիարքի անունների հետ միասին:

Օրէնքով Պէտք է Արգելել

Շարունակուած էջ 2-էն

քարերի ու խաչքարային մշակույթի մասին չէ:

Սակայն եկեղեցին չի կարող որեւէ բան արգելել իր իրաւասութիւնների շրջանակներից դուրս գտնուող տարածքներում: Դա արդէն պետութեան գործն է: Օրէնքով պէտք է արգելել այդ «ուսիքներ», իսկ արդէն եղածներն ապամոնտաժել: Եւ, առաջին հերթին, հենց եկեղեցին պէտք է յորդորի իշխանութեանը օրէնքով նման ար-

գելք սահմանել: Դա ցածրաճաշակ երգ չի, որ ով ուզում է լսի, ով չի ուզում՝ անջատի, չլսի: Մարդ, ուզի թէ չուզի, ակամայ տեսնում է՝ դրանք տնկուած են նրա տեսողաշտում, չի կարող աչքերը փակել:

Վերջերս ինչ-որ տեղ հանդիպեցի, որ նմանօրինակ մի անձաշակութիւն պատրաստուած են դնել Երեւանի մուտքերից մէկի մօտ: Յուսով ենք՝ Երեւանի քաղաքապետարանը դա թոյլ չի տայ:

«Ի ԼՈՒՐ»

Հանրապետութեան Հրապարակի Տակ Գտնուող Պատմական Շերտը Պիտի Բացուի Եւ Վերածուի Թանգարանի



Այս տարի պիտի սկսին Հին Երեւանի՝ Հանրապետութեան Հրապարակին տակ գտնուող պատմական շերտի բացման եւ գայն թանգարանային հատուածի վերածելու աշխատանքները: Այս մասին Ֆէյսպուքի իր էջին վրայ գրած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան:

«Հանրապետութեան Հրապարակը՝ իբրեւ արդիւնք՝ պիտի դառնայ շատ աւելի տեսարժան վայր», - գրած է վարչապետը:

Կրթութեան, գիտութեան, սփորթի եւ մշակույթի նախարար Արայիկ Յարութիւնն ալ «Ֆէյսպուք»-ի էջին նշած է, որ հին քաղաքը վերականգնելու հնարավորութիւնները կը քննարկէ մասնագէտներու հետ:

Աւելի Հին է, Քան Սթոունհենը. The Travel-ը Առաջարկում է Այցելել «Զօրաց Քարեր»



Աւելի հին են, քան Սթոունհենը The Travel կայքն այսպէս է ներկայացրել տեսարժան այն 20 վայրերը, որոնք առաջարկում է ճամբորդասէրներին իրենց ծրագրերի մէջ ներառել:

Կայքի ցանկում է յայտնուել նաեւ Հայաստանի «Զօրաց քարեր» պատմամշակութային արգելոցը: «Հնութիւնից խոնացած քարերը բաւականին տարածուած են, բայց Զօրաց քարերի ատամնաւոր եզրերը այն դարձնում են շատ աւելի իրական: Հայաստանի շքեղ ամառային տեսարանը նման վայրերը դարձնում է էլ աւելի գրաւիչ՝ ճամբորդութիւնը պլանաւորելիս», - գրում է TheTravel-ը:

Հայաստանի Մէջ Նշուեցաւ

Շարունակուած էջ 1-էն

խորհրդարանական մարմիններուն, որոնք արձագանգած եւ փաստագրած են այս իրադարձութիւնները՝ զանոնք դատապարտելով ու աշխարհին ի ցոյց դնելով:

«Գլուխ խոնարհելով մեր անմեղ զոհերու յիշատակի առջեւ, ես ամենայն պատասխանատուութեամբ կը յայտարարեմ՝ հայերու բնաջնջման կամ բռնագաղթեցման նոր փորձերու հնարաւորութիւն պիտի չտանք: Հայաստանի Հանրապետութիւնը, Արցախի Հանրապետութիւնը եւ ողջ աշխարհասփիւռ հայութիւնը միասնաբար պիտի ներդրեն իրենց ողջ ներուժը՝ ապահովելու հայ ժողովուրդի գոյույթեան եւ խաղաղ զարգացման իրաւունքը իր պատմական հայրենիքի

մէջ, այդ շարքին՝ Արցախի մէջ», - աւելցուցած է Նիկոլ Փաշինեանը:

«Յաւով պէտք է արձանագրենք, որ անցած երեք տասնամեակն Ատրպէյճանի մէջ չէ դարձած վերաիմաստաւորման, զղջման եւ հաշտութեան հասնելու ժամանակաշրջան», - նշած է վարչապետը:

Ան նաեւ ընդգծած է, որ այս ընթացքին ականատես եղած ենք Արցախի բնակչութիւնը բնաջնջելու փորձի, մարդասպանութեան համար պատիժ կրող Ռամիլ Սաֆարովի ազատ արձակման եւ հերոսացման, 2016թ. ապրիլին Արցախի սահմանամերձ բնակավայրին մէջ տարեց եւ անօդական մարդոց դաժան խոշտանգման եւ սպանութեան: Հայաստեացութիւնը դարձած է Ատրպէյճանի պետական քաղաքականութիւնը եւ հաւատամքը:

Թուրքիան Եւ Ազգային Փոքրամասնութիւններու Բնաջնջումը

ՀԱՄԱՐՁՈՒՄ ԱՂՊԱՇԵԱՆ

Էրտողանի ներխուժումը Սուրիոյ հիւսիսային շրջան՝ քիւրտ բնակիչները եւ մարտիկները սահմանէն հեռու մղելու համար, անպայման ցոյց կու տայ Թուրքիոյ հեռաւոր նպատակները եւ ծրագիրները այդ շրջանին հանդէպ. անկասկած, Սուրիոյ քիւրտ մարտիկներուն վտարումը սահմանէն տասնեակ քիլոմետրեր հեռու պիտի արգիլէ անոնց շփումը Թուրքիոյ մէջ Քիւրտիստանի Աշխատաւորական կուսակցութեան (PKK) քիւրտերուն հետ, պիտի խզէ կապերը եւ դադարեցնէ չարաբերութիւնները անոնց միջեւ, ինչպէս նաեւ պիտի սաստկացնէ շրջափակումը Թուրքիոյ քիւրտերուն դէմ: Սակայն, էրտողանի վերջնական նպատակը այդ տարածաշրջանը ամբողջութեամբ եւ ընդմիջտ քիւրտերէ դատարկել է եւ տարածաշրջանի ցեղային քարտէսը փոխել. թէեւ հոն արաբներ, քրիստոնէաներ եւ ուրիշներ ալ կ'ապրին, սակայն բոլորն ալ Թուրքիոյ համար դաւաճաններ են:

Թուրքերը սուրով ու թուրով կը հալածեն երկրի փոքրամասնութիւնները. միաժամանակ, համայն աշխարհը կը դիտէ այդ իրադարձութիւնները, Թուրքիոյ դէմ կ'արտայայտուի, անոր կը սպառնայ, սակայն ոչ մէկ գործնական քայլ կ'առնէ զայն սանձելու համար: Թուրքերը շատ երկիրներ ու տարածքներ գրաւած են, ի միջի այլոց նաեւ Արեւմտեան Հայաստանը, արաբական եւ այլ երկիրներ, ամէն տեղ միջնադարեան մոլոր խաւարի մէջ ձգելով: Այդ վայրերու բնակիչները թրքական ազգայնամոլութեամբ իշխեցին եւ բոլորը թրքացնել ուզեցին, ու պէտք ըսել՝ մասամբ յաջողեցան... Պոլիսը, որ Արեւելեան Հռոմէական կայսրութեան մայրաքաղաքն էր մինչեւ 1453 թուական, օսմանցիները զայն գրաւելէ ետք իրենց մայրաքաղաքը դարձուցին (1453-1923) մինչեւ Աթաթուրքի իշխանութեան գլուխ գալը, երբ ան Թուրքիոյ մայրաքաղաք ըրաւ Անգարան: Ներկայիս, Պոլիսը Թուրքիոյ ամենամեծ քաղաքն է՝ 15 միլիոն բնակչութեամբ, իսկ հոն յոյներուն թիւը միայն երեք հազար է:

Պալքաններու մէջ Պոսնիան մէկ այլ օրինակ է. հոն թուրքերը իսլամութիւն տարածեցին եւ երկրի մշակութային ու ընկերային աշխարհայեացքը փոխեցին. իսկ Արեւմտեան Հայաստանի կացութիւնը աղէտ մըն է, մեծ դժբախտութիւն մը, կորուստ մը, զոր կը յուսանք վաղ թէ ուշ ետ կը դառնայ տէրերուն՝ մեզի, հայութեան: Արդարեւ, երկիրը դատարկուած է իր հայ բնակչութենէն, իսկ հոն մնացած հայերը, որոնք արդէն իսկ իսլամացած են, իրենց արմատները կը փնտռեն: Միայն տասնեակ մը հազարով հայ մնացած է Պոլիս եւ այլուր: Եկեղեցիներուն մեծ մասը մզկիթներու վերածուած է եւ տակալին կը վերածուի. մնացածն ալ անմխիթար վիճակի մէջ՝ կիսափուլ կամ բոլորովին խոնարհած: Բոլորը պղծուած եւ մաս մըն ալ ախոռներու վերածուած են. իսկ մշակութային կոթողները արդէն իսկ անհետացած են, մնացածն ալ օրէ օր կ'ամ կ'անհետանայ, կ'ամ թրքական դրոշմ կը ստանայ: Պոլիսոյ հայութիւնը, սակայն, դեռ կը

գոյատեւէ իր եկեղեցական, մշակութային եւ կրթական հաստատութիւններով: Պոլիսի եւ ճազիրէի քրիստոնէաներն ալ ունեցան հայերուն նոյն ճակատագիրը:

Հիմա հերթը քիւրտերունն է. անոնց թիւը Թուրքիոյ մէջ քսան միլիոն կը նկատուի. անոնք մեծամասնութեամբ երկրի արեւելեան եւ հարաւ-արեւելեան մասերը կը բնակին. անոնցմէ երեք միլիոն ալ Պոլիս կը գտնուի եւ բաւական լաւ կազմակերպուած գաղութ ունի: Պոլիսոյ քիւրտերը յաջողեցան խուճ մը քիւրտ եւ համակիր թեկնածուներ, ի միջի այլոց նաեւ հայ ազգի գաւակ կարօ Փայլանը, քրտամէտ Ընկերվար Ժողովրդական կուսակցութեան կողմէ Թուրքիոյ խորհրդարանի անդամ ընտրել. անոնք նաեւ մեծ դեր ունեցան Պոլիսոյ նոր քաղաքապետ Աքրամ Իմամ Օղլուի ընտրութեան մէջ, սակայն ստոնց ազդեցութիւնը միայն քաղաքական է, մինչդեռ զէնքը զիւղացիներուն ձեռքն է:

Ներկայիս, էրտողանի համար ներքին ամենամեծ մարտահարկերը քրտերն են:

րաւէրը քրտական ազգային ազատագրական շարժման վերջ տալ է: Քիւրտիստանի Աշխատաւորական կուսակցութիւնը (PKK), որ հիմնուած է 1978ին Տիգրանակերտի Ֆիս գիւղը՝ Ապտուլլահ Օճալանի ղեկավարութեամբ, հիմնումէն տարիներ ետք զէնքի դիմեց: 1984էն ի վեր այդ կուսակցութիւնը կը պայքարի Թուրքիոյ պետութեան դէմ. մերթ ընդ մերթ զինադադարներ եղած են (1999-2004 եւ 2013-2015): Իսկ 1999էն ի վեր անոր ղեկավար Օճալանը բանտարկուած կը մնայ, սակայն պայքարը կը շարունակուի:

Ըստ Սեւրի դաշնագիրին, որ ստորագրուած է 10 Օգոստոս 1920ին, Թուրքիոյ հարաւ-արեւելեան շրջաններէն մաս մը՝ Արեւմտեան Հայաստանի հարաւի սահմանէն դէպի Իրաք, քիւրտերու ինքնավար շրջան իբրեւ որոշուած էր, սակայն Լօզանի դաշնագիրով՝ 1923ին, այդ որոշումը վերջ գտաւ: Քիւրտերը իրենց երազած մեծ հայրենիքի քարտէսը գծեցին ըստ իրենց ցանկութեան, «Մեծն Քիւրտիստան»-ի քարտէսը, որուն մեծ մասը Թուրքիա կը գտնուի:

Աթաթուրք քիւրտերը «լեւրան թուրքերը» անուանեց. անոնց

արգիլեց գրական եւ կրթական մշակութային ասպարէզի մէջ իրենց ազգային լեզուն գործածել կամ թերթեր հրատարակել քրտերէնով: Ան նաեւ արգիլեց քրտական քաղաքական կուսակցութիւններ հիմնել: 1925ի Շէյխ Սայիտ Փիրանի յեղափոխութիւնը՝ ընդդէմ Աթաթուրքի, առաջինը եղաւ քիւրտերուն կողմէ, բայց չյաջողեցաւ. Շէյխ Սայիտ իր զինակիցներով մահապատիժի ենթարկուեցաւ, հարիւրաւոր քրտական գիւղեր հրկիզուեցան, բնակչութիւնը հեռացուեցաւ, ինչպէս նաեւ քիւրտերու ունեցուածքները թալանուեցան թուրք զինուորներու կողմէ: Պատմութիւնը կրկնուեցաւ. այս անգամ, սակայն, զոհերը քիւրտերն էին, որոնք 1915թ., այդ դէպքերէն միայն 10 տարիներ առաջ, թուրքերուն հետ միասին կոտորեցին մեր ազգը, այրեցին մեր գիւղերը, թալանեցին հայուն ունեցուածքը եւ բռնաբարեցին հայ կիներն ու կոյսերը:

1927-1930 թուականներուն, Արարատ լեռան մօտակայ գիւղերուն մէջ ծայր առաւ «Ազրի»-ի յեղափոխութիւնը՝ քիւրտ զօրա-

Շար.ը էջ 19



ARMENIAN COUNCIL OF AMERICA



MEET & GREET

Featuring H. Res. 296 Co-sponsor Rep. Judy Chu

TOPICS

- . Discussion about H. Res 296
- . Congresswoman Chu's recent trip to Armenia & Artsakh
- . An update on current events in our nation's capital
- . Discussion on what is next
- . Question & Answer session to follow

WHEN

Thursday, January 23rd
at 7:30 PM

WHERE

A.E.B.U. Center
1060 N. Allen Ave
Pasadena CA. 91104

818.660.5142
www.armeniancouncil.org
info@armeniancouncil.org

2020 Տարին՝ Հայաստանեան Կնիքով

ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԽԹԵԱՆ

Ամանորի առթիւ Հայաստանի ղեկավարութեան կողմէ կատարուած շնորհաւորական ուղերձներու

Հարքը աչքէ անցընելով եւ մուսլ ապագայ մը կանխատեսող լիբանանցի ու ալլազգի քաղաքագէտներու եւ դէտերու խօսքերը մտիկ ընելով՝ Փաշինեանի ուղերձով նկարագրուած Սփիւռքի հպարտ հայութիւն կոչուածներս կրնանք ուրախութեամբ միայն ընկալել իր խօսքը, որ կ'ըսէ, թէ «Հայաստանի Հանրապետութիւնը ամէն տարուայ հետ լինելու է աւելի ազատ, աւելի ինքնիշխան եւ աւելի արժանապատիւ»:

Անոր «եօթն անգամ չափուած եւ մէկ անգամ կտրուած» յեղափոխութիւնը կ'ուզէ նոր տարին մտնել ու զայն դիմաւորել «բարձր տրամադրութեամբ, ամրապնդուած ինքնավստահութեամբ, եւ սեփական ուժերի եւ ապագայի նկատմամբ նորոգուած հաւատով»:

Կարելի չէ յարգանքով ու սիրով չլեցուիլ հանդէպ անոր, որ իր խօսքը ուղղելով ժողովուրդին՝ կ'ըսէ.

«Զեր բոլոր ցաւերը իմ սրտում են, ձեր բոլոր կարիքները իմ մտքում են, ձեր բոլոր երազանքները իմ հոգում են»:

Նախագահ Արմէն Սարգսեանի կողմէ եղած Ամանորի շնորհաւորական ուղերձն ալ իմաստուն ու փորձառու մարդու խրատը կու տայ մեր բոլորին՝ մարթելով «ողջամտութիւն, կարգապահութիւն, կազմակերպուածութիւն, առողջ դատողութիւն, պատասխանատուութիւն եւ հանդուրժողականութիւն»:

Անոր խորիմաստ պատուէրները, որ ըլլանք «նաւահանգիստ համաշխարհային տուեալների ովկիանոսում» եւ թէ «անհնար է յաջողութեան հասնիլ բարոյականութեան եւ մշակութի անապատում»՝ զինք կը դարձնեն արդի Սողոմոն իմաստունը մեր երկրին: Օրէնքը յաճախ անտեսող ու շրջանցող մեր հայրենակիցներուն ուղղելով իր խօսքը՝ նախագահ Սարգսեան կ'ըսէ. «Մենք պէտք է օրէնքի երկիր լինենք... Սահմանադրութիւնը եւ օրէնքները պէտք է ընկալուեն ոչ թէ որպէս սոսկ իրաւաբանական փաստաթուղթ, այլ՝ որպէս մշակույթ եւ կենսակերպ»:

Խանդավառիչ է նաեւ Ամանորի առթիւ ըսած խօսքը Հայաստանի գինեալ ուժերու գլխաւոր շտապի պետ զենեալ-լէյտենանտ Արտակ Դաւթեանի՝ երբ կ'ըսէ, թէ «մեր բանակն այսօր աւելի ուժեղ է քան երբեք, եւ պատրաստ է լիարժէք կատարել հայկական երկու հանրապետութիւնների սահմաններն անձեռնմխելի պահելու պատուաւոր առաքելութիւնը»:

Հայաստանեան այսպիսի պետական ղեկավարներու ինքնավստահ, հարազատ ու դաստիարակիչ խօսքերը յոյս կը ներշնչեն բոլորիս, որ մեր հայրենիքը հոգատար ձեռքերու մէջ ըլլալով՝ պիտի դառնայ օրէնքի երկիր, եւ որպէս

«նաւահանգիստ համաշխարհային տուեալների ովկիանոսում»՝ պիտի դառնայ գիտութեամբ հարստացած ու զօրացած համաշխարհային կեդրոն գիտաժողովներու եւ համագումարներու: Պատերազմէն չվախցող եւ խաղաղութիւն պարտադրող անոր բանակը թշնամիին թուրանական երազները շոգիացնելով՝ մեր բարեկամ ուսին պիտի շարունակէ ըսել ու հասկցնել, թէ մեր ժողովուրդներու դարաւոր եղբայրութիւնը հիմնուած է փոխադարձ շահերու փոխանակումով կովկասի տարածքին՝ առանց մեծ ու փոքր ուժ ըլլալու բարդութիւն, այլ մեծ ու փոքր եղբայր ըլլալու հաստատ հաւատքին:

Հայաստանի օգտաշատ եւ բարի դրացնութիւնը իրանի հետ՝ 2020-ին անպայման պէտք է վստահութիւն Ամերիկա-իրան սուր հակամարտութեան պատճառաւ: Նախագահ Սարգսեանի իմաստութեամբ, միջազգային հեղինակութեամբ եւ այլազան փորձառութիւններով, առաւել՝ Փաշինեանի ժողովրդասիրութեամբ եւ նուիրուածութեամբ, չուսալի է, որ Հայաստան պիտի կարողանայ հաւասարակշռել իր կապերը երկուքին հետ, որպէսզի հեռու մնայ կռուադաշտի կողմ կամ կեդրոն ըլլալէ: Յուսադրիչ է Փաշինեանի ըրած յայտարարութիւնը քանի մը ամիս առաջ, թէ Ամերիկա ճնշում չի բանեցնէր Հայաստանի վրայ, որպէսզի ան վերջ տայ կամ կրճատէ իր տնտեսական ու քաղաքական կապերը իրանի հետ:

Շնորհակալ գործ կատարեց վերջերս Հայաստանի Անվտանգութեան Ծառայութիւնը, երբ յայտնաբերեց եւ ձերբակալեց հայաստանցի «ապուշ» մը, որ համացանցի վրայ սխալ լուր տարածած էր՝ զրպարտելով, թէ վարչապետ Փաշինեան շնորհաւորած է Ամերիկայի նախագահ Տանըլտ Թրամփը՝ իրանցի զօրավար Քասեմ Սոլէյմանին սպաննելու գործողութիւնը հրահանգած ըլլալուն համար:

Սոլէյմանի սպանութեան հետք, հրահրուած են կիրքերը արաբական եւ իրանեան ազդեցութեան գոտիներուն մէջ գտնուող միջինարեւելեան երկիրներուն: Նեթանիա-հուրի իսրայէլին եւ թրամփեան Ամերիկային գործակցութեամբ ծրագրուած ու մշակուած առճակատումի կործանարար քաղաքականութիւնը Միջին Արեւելքը կրնայ դարձնել կռուադաշտ՝ բոլոր կողմերով մղուելու եւ ամէնուն ալ վնասելու հետեւանքով: Դատական հետապնդումի դատապարտուած Նեթանիահուրի եւ Թրամփը ամէն ինչ պիտի փորձեն ընել, որպէսզի շեղեն իրենց դէմ եղած հանրութեան մեղադրանքն ու վճիռը: Տայ Աստուած, որ դէպքերը ընթանան այնպէս, որ երկուքն ալ դատուին ու կասեցուին իրենց ռազմավարութիւնը կիրարկելէ՝ յօգուտ մեր հայրենիքի ունեցած բարի դրացնութեան իրանի հետ, յօգուտ Միջին Արեւելքի ժողովուրդներու խաղաղ գոյակցութեան եւ յօգուտ խաղաղասէր մարդկութեան:

Արաբական Աշխարհ Օճան եւ Իր Նոր Սուլթանը

Անցեալ Շաբաթ, Յունուարի 10-ին, 2020 Օճանի մէջ իր մահանացուն կնքեց Արաբական Թերակղզիի հարաւակողմը գտնուող Օճանի միապետ Սուլթան Քապուս Պին Սայիտը: Տասնեակ տարիներու իր իշխանութեան շրջանին կրցաւ չափաւոր քաղաքականութիւն մը վարել շրջանի հակամարտ երկիրներու միջեւ: Մեծադպէս գնահատուած էր նաեւ հանգուցեալ սուլթանի հաւասարակշռուած ուղեգիծը մասնաւորաբար իրանի եւ ԱՄՆ-ի հակասական կեցուածքներուն մէջ:

Այս առթիւ ցաւակցական հեռագիր մը յղած էր նաեւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգսեան:

Օճանի նոր զահակալ Սուլթան Քապուս Պին Սայիտը շնորհաւորելու եկան Պահլէյնի թագաւորը, ինչպէս նաեւ Յորդանանի վեհապետն ու Եմէնի հանրապետութեան նախագահը եւ իրենց ընկերակցող պատուիրակութիւններն ու Թունիզի Հանրապետութեան նախագահը, Պաղեստինի պետութեան ղեկավար Մահմուտ Ապպալը, որ միաժամանակ Պաղեստինի Ազատագրութեան կազմակերպութեան նախագահն է ու ձիպութի նախագահը, Բրիտանիոյ վարչապետն ու Ապու Տապիի զահաժառանգը եւ այլ պետութեանց ղեկավարներ, ներառեալ իրանի իսլամական Հանրապետութեան ներկայացուցիչն ու Ֆրանսայի Հանրապետութեան նախկին նախագահ Նիգոլա Սարգոլին:

Նորանշանակ սուլթանն է երկրի մշակութի նախկին նախարար Սուլթան Հայթեմ Պին Սայիտը: Ան իր երդման արարողութեան ընթացքին ճառ մը արտասանելով, յայտնեց թէ հաւատարիմ պիտի մնայ իր նախորդի որդեգրած ներ-



քին եւ արտաքին քաղաքականութեան, զարկ տալ երկրի տնտեսական բարգաւաճումին ու ժողովուրդի կենսամակարդակի բարձրացումին: Միաժամանակ շանք պիտի տանի առաւել եւս բարեկամական եւ համագործակցութեան կապերն ամրացնելու արաբական երկիրներու հետ նաեւ բարձրացնելու Արաբական Լիգայի հեղինակութիւնը: Նոր սուլթանն իր կրթութիւնը ստացած է Անգլիոյ մէջ:

Շուրջ չորս ու կէս միլիոն բնակչութիւն ունեցող այս երկրի տարածութիւնն է 11,714 քառ. քիլոմէթր: Բնակչութեան 90 տոկոսը արաբներն են: Կան նաեւ պարսիներ, հնդիկներ եւ ափրիկեան տարբեր երկիրներէն եկած զաղթականներ: Նախկին սուլթանը զահաժառանգած էր 1970 թուականին եւ ինքզինք յայտարարած էր սուլթան Մաքթիւմ եւ ապա բովանդակ Օճանի: 1971 Սեպտեմբեր 29ին, Օճանի սուլթանութիւնը պաշտօնապէս ընդունուած է արաբական Լիգայի անդամ, իսկ նոյն տարուան Հոկտեմբերի 7-ին՝ անդամ Միացեալ Ազգերու կազմակերպութեան:

Ամերիկայի Համար Գրեշը

Շարունակուած էջ 1-էն

հետեւ Ամերիկեան գօրքերը հանգիստ պիտի չտեսնեն, մինչեւ որ հեռանան ամբողջ տարածաշրջանէն:

Սուլթանի յուղարկաւորութիւնը տեւեց օրեր՝ իրաքէն մինչեւ Իրան, մասնակցութեամբ միլիոնաւորներու: Իրանեան կողմը սպասուածէն շատ կանուխ՝ Սուլթանի մարմինը հողին յանձնելէն անմիջապէս ետք, սկսաւ հրթիռներ արձակել Իրաքեան երկու ռազմական ցամաքներու դէմ, ուր կը գտնուին շուրջ հինգ հազար ամերիկացի զինուորականներ:

Լուրը տարածուելէն ետք, աշխարհը ամբողջ կը սպասէր Ամերիկեան կողմի հակահարուածներուն, այս անգամ իրանի սահմաններէն ցերս: Սակայն, ժամեր անց երբ յայտնի դարձաւ, որ իրանեան հրթիռները պատճառած են միայն ցարկական վնասներ առանց մարդկային զոհեր խլելու, նախագահ Թրամփ ետ քայլ կատարելով յայտարարեց, որ այսքանով պիտի բաւարարուի եւ նոր քայլերու պիտի չդիմէ: Իրանեան կողմը եւս մոյսանման մշաններ ուղարկելով կարծես թէ փորձեց ինք եւս այսքանով բաւարարուիլ:

Հակառակ այս տրամադիլ եւ արագ զարգացումներուն, ԱՄՆ-իրան յարաբերութիւնները կ'ապրին իրենց վատագոյն օրերը եւ իրար դէմ զինուորական քայլերու վտանգը չէ վե-

րացած եւ կրնայ դարձեալ բռնկիլ, որեւէ մէկ պահուն:

Այս բոլորին մէջ պատասխանատուութեան մեծ բաժին ունի նախագահ Թրամփ, որ չեղեալ յայտարարելով Նախագահ Օպամայի օրով Իրանի հետ կնքուած միջուկային զէնքերու արտադրութեան համաձայնութիւնը, աւելի սրեց իրավիճակը: Այս քայլին յաջորդած տնտեսական պատժամիջոցները Պարսկաստանի տնտեսութիւնը հասցուցին անդունդի եզրին:

Այս բոլորին մէջ մեղքի իր բաժինը ունի նաեւ Իրանը, որ միլիառաւոր տոլարներ կը յատկացնէ Արաբական տարբեր երկիրներուն մէջ իրեն եւթաթակայ զինեալ խմբաւորումներ պահելու համար, փոխանակ այդ գումարները իր ժողովուրդի բարօրութեան ծառայեցնելու:

Այս բոլոր իրադարձութիւններուն մէջ արձանագրուեցաւ նաեւ ողբերգութիւն մը, որուն գոհ գացին 176 անմեղներ, երբ Թեհրանի օդակայանէն թռիչք կատարող Ուքրաինական օդանաւը սխալմամբ խոցուեցաւ իրանեան հակաօդային պաշտպանութեան ուժերուն կողմէ:

Զօրավար Քասեմ Սուլթանի մահը եկաւ անգամ մը եւս հաստատելու պատմական այն իրողութիւնը, որ չափահիշերը կը տարբերին ու մէկ ժողովուրդի համար կը դառնայ ազգային հերոս:

«ՄԱՍԻՍ»

Զեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս»
Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net

Պոլսոյ Քաղաքապետ Էքրամ Իմամօղլուն Այցելած Է «Հրանդ Տինքի Թանգարանը



Պոլսոյ քաղաքապետ Էքրամ Իմամօղլուն այցելած է «Ակօս» թերթի նախկին խմբագրութեան գրասենեակ, որ վերածուած է «Հրանդ Տինքի յիշողութեան» թանգարանի:

Ինչպէս կը տեղեկացնէ Պոլսոյ հայկական «Ակօս»ը, Պոլսոյ քաղաքապետ, ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական» կուսակցութեան անդամ Էքրամ Իմամօղլուն Հրանդ Տինքի այրիի, պու-

սահայ յայտնի ճարտարապետ Ջաքարիա Միլտանօղլուի ուղեկցութեամբ այցելած է Հրանդ Տինքի թանգարան:

Այցէն ետք Պոլսոյ քաղաքապետը ընկերային ցանցի մէջ գրառում կատարած է՝ շնորհակալութիւն յայտնելով թանգարանը ստեղծողներուն: «Սրտին մէջ միշտ խաղաղութիւն կրող Հրանդ Տինքի հոգին թող լոյսի մէջ ըլլայ», գրած է Պոլսոյ քաղաքապետը:

Ժընեի Սէջ Մահացած Է Նազարէթ Սիրմաքէ

Օրեր առաջ ժընեի մէջ իր մահականացուն կնքած Նազարէթ Սիրմաքէ՛ն անցիալ Ուրբաթ յանձնուած է հողին: Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուած է ժընեի Սուրբ Յակոբ առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ:

Սիրմաքէ՛ի Ազգային թաղամիջին ներկայ գտնուած են Մայր Աթոռի ներկայացուցիչներ Տ. Խաթակարք. Պարսամեան (Վատիկանի մօտ Մայր Աթոռի յատուկ պատուիրակ) եւ Տ. Եգրաս արք. Ներսէսեան (Առաջնորդ Ռուսաստանի եւ Նոր Նախիջևեանի թեմի), ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան գործող նախագահ Տիար Բակօ Սահակեան եւ Արցախի քաղաքական գործիչ Տիար Արալի Յարութիւնեան:

Յաւուր պատշաճի դամբանականով հանդէս եկած է Տ. Խաթակարքեան, որ իր խօսքին մէջ կարեւորած է հանգուցեալին ազգային խնդիրներուն վերաբերեալ ցոյց տուած նախանձախնդրութիւնը եւ մինչեւ իր կեանքի վերջին պահը մեր ժողովուրդին օգտակար ըլլալու հանգամանքը:

Իր կարգին Չուիցերիոյ թեմի առաջնորդական տեղապահ Տ. Գուսան Մ. Վրդ. Ալճանեան ընթերցած է Մայր Աթոռի գահակալ



Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսի այս առթիւ պատրաստուած գիրը:

Կարգացուած է նաեւ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանի ու վարչապետ Նիկոլ Փաշինեանի յարգանքի գիրերը:

Յուզարկաւորութեան եւ թաղման արարողութեան ներկայ եղած են մեծ թիւով ազգային-հասարակական գործիչներ, գործարարներ ու նաեւ ժընեի համայնքի անդամներ:

Նազարէթ Սիրմաքէ՛ն հայրն էր ազգային յայտնի բարերար Վարդան Սիրմաքէ՛ին:

Չինացի Հանդիսատեսը Տպաւորուած Ու Հիացած Է Եղել Հայաստանի Ազգային Ֆիլհարմոնիկ Նուագախմբի Ելոյթներով



Մարտիրոս Խարասարցին ապրեցաւ 1500ականներուն, հաւանաբար Ղրիմի Կաֆա քաղաքի մէջ: Ան առաջինն է, որ երգեց խնձոքը, ուրախութիւնը եւ կեանքի վայելքը: Կենսասէր է Խարասարցին: Ան ժողովրդական տօնախմբութիւնները նկարագրեց իրենց աշխարհիկ երեւոյթներով: Հայկական երգի ուրախ սեղանին Խարասարցին նուիրեց «Վասն ուրախութեան» տաղը, որ ծանօթ է նաեւ «Բուն բարեկենդանի տաղ» անունով: Այբբենական է ան, ունի Այբէն մինչեւ Քէ տառով սկսող տողեր: Ահա այսպէս. «Այբն ասէ. Այսօր ըմպեմք, Բենն ասէ. Բերեք գինի... Գիմն ասէ. Գինի անուշ...»: Տաղը կ'աւարտի բարձր տրամադրութեամբ. «Փիւրն ասէ. Փառք տամք այսօր, Քէն ասէ. Քահանայիւք... Ուրախ լեր, ուրախ լեր, ուրախ լեր, տան տանուտէրս ասպնջական, ուրախ լեր»:

Ապա եկաւ վշտահար Գրիգորիս Աղթամարցին: Միջնադարեան մարդու ներքին տառապանքը, դատաստանի սարսափը, վաղահաս մահուան գարհուրանքը, հայրենիքի ողբալի վիճակը, աստանդական կեանքի աղաղակը ո'չ մէկ տաղասացի գործերու մէջ աւելի լսելի է, քան Արծրունիներու թագաւորական տոհմէն սերած, Աղթամարի կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցիի գործերը: 1480-1550 թուականներուն ապրեցաւ ան: Երկրի անհաստատ վիճակը ստիպեց, որ ան ապաստան գտնէ Արճէշի, Մեծփի, Վարագայ եւ Ուռնկարի վանքերու մէջ: Բանաստեղծի հետեւեալ տողը կը բաւէ պատկերացնելու համար, թէ անօրէն «հագարացիները» (արաբները) ինչպէ՛ս կը վարուէին մեր երկրի եւ մեր ազգի հետ. «Հագարացիք օրինօք թիւր, գազգս խանձեն որպէս գհուր...»: Բանաստեղծը նաեւ ինքզինք նկատեց մեղաւոր ու ըսաւ. «Եղուկ ու հագար մի վայ, / Որ մեղօք ես

աղտեղացայ, / Ղեկօք ես ի ծով իջայ, / Եւ հողմով չարին վարեցայ»: Ժողովրդականացած է Աղթամարցիի «Յամէն առաւօտ եւ լոյս» տաղը, որում մէջ բանաստեղծը ամէն առտու կը լսէ ստիակի քաղցր ձայնը, բայց կը սարսափի, մտածելով թէ արդեօք մահուան կանչն է ան. «Յամէն առաւօտ եւ լոյս, Գաբրիէլն ասէր հոգևոյս: Արի՛, ե՛լ ի յայտ այգոյս...»: Այդ «այգին» կեանքն է, զոր մարդը կը սիրէ մշակել ու պտուղները վայելել: Մարդը ջանք կը թափէ, այդպէս չէ՞, բարեկեցիկ կեանք մը ապրելու համար, քար քարի վրայ կը դնէ, պատ պատի քով կը հիւսէ... «Իմ նորատունկ այգոյս՝ քար եմ բերեր սարերոյս, ջուր եմ բերեր լեռներոյս, աղբիւր եմ շիներ այգոյս, դեռ չեմ խմեր ի ջրոյս: Ուռ եմ տնկեր այս այգոյս, դեռ չեմ կերեր պտորոյս»: Այգեպանի համար սարսափելի է մահուան գաղափարը, քանզի, «Ինչպէ՞ս ելնեմ ի

յայգոյս, գէմ չար փուշ կայ պատերոյս»: «Փուշ»ը, յարգելի ընթերցող մեր մեղքերն են: Ինչպէ՞ս ձգել երկրային կեանքը եւ յայտնուիլ դատասանի առջեւ, երբ մեր մերկ ոտքերուն խճճուած են մեղքի փուշերը...: Երկրի խաղաղ օրերուն, Աղթամարցին գրի առաւ տաղեր, գեղեցկուհի մը փառաբանող, համարձակ, կենսախինդ: Չենք գիտեր, թէ Մարիամ Աստուածածնի՞ն են նուիրուած անոնք, թէ հողեղէն գեղեցկուհիին: Ժողովուրդը գանոնք ուզեր է ընկալել, որպէս աշխարհիկ երգեր: Ահա քանի մը պատկերաւոր պատառիկ. «Գիշերն մինչ ի լուս ես, տապիմ եւ տոչորիմ

ուած մը. «Հիւանդ մարմինս ի դող ելաւ, / Յանկարծ շուտով առողջացաւ, / Հոգով, մարմնով ուրախացաւ, / Երբ հերիսի խապար հասաւ... Ա՛յ հերիսայ, իմ գովական, / Ոչ ոք չկայ ի քեզ նման, / Ամէն մարդիկ դէմ քեզ դողան»: 1500ականներու երկրորդ կէսի բանաստեղծ, արքեպիսկոպոս, Լվով քաղաքի հայոց առաջնորդ Պարսամ Տարպիզոնցին տառապեցաւ եւ գանգատեցաւ... ակուսի ձաւէն. «Ակուսեկս հալ մի չունի, / Կու խոստէ, յիս չի մնաց հոգի, / Թէ տամ քաշել, նա կու ցաւի, / Դու ի՞նչ խրատ կու տայք ինձի: / Հոգիս կելնու հետ չոր հացի, /



ես, վախեմ թէ մեռնիմ ես ի քէն հեռի եւ անտես», «Սիրամարգի նման սաւառնացեալ ես, վարդի թփի նման աթլաս հագեր ես», «Ձայն տուր ինձ, ո՛վ տարփալի, մարմինս իմ նուաղեալ մաշի», «Արեգակնափայլ գեղով լի լուսին ի տասնուհինգէ, / Աչեր ծով ի ծով ունիս, սոսկալի վարսաւոր սրովբէ. / Ուներդ է քաշած կամար, գինչ գարնան աղեղն ի յամպէ, / Լեզուդ տապարգի շաքար, քո շրթունքդ վարդի թերթ է», «Նորաբոյս ծաղիկ եւ տունկ նշենի, երեսդ է պայծառ քան զթերթ վարդի», «Սիրով լափեցիր եւ արիւր գսիրտս խոց, կու տապիմ եւ այլիմ որպէս ի հնոց», «Քո մէջքդ է բարակ քան գուռի», «Բխեն ստինքդ կաթն քո գինի, մեղր ի շրթանցդ քո կաթի», «Մոմեղէն մասունք, հոտ պալասանին / Դու նուշ ու շաքար, տուփ անոյշ խնկին»: Իսկ բանաստեղծը ի՞նչ ածականներու արժանի գտաւ ինքզինք: Յարգելի ընթերցող, մի՛ ակնկալէք շողշողուն եւ փառասիրութեամբ ուռչած բառեր: Իր տաղերու մէջ Աղթամարցին է «խեւ, յիմար, եղկելի, ողորմելի, մոլորեալ, անիմաստ, թափառնիկ աղքատ, ունայնաբան, ծառայ մեղաց»:

Հաւաս ունիմ ես չոր մսի, / Ձէտ որ ի յակուս կու հասանի, / Այլ չի մնաց ի յիս հոգի»: Յովհաննէս տաղասացը, առաջինը աշխարհի մէջ, զգուշացուց ծխողներուն. «Ով որ սովոր է ի թութուն (ծխախոտ), / Բագու՛մ վնաս գործէ հոգոյն, / Վնաս հոգոյն եւ վիշտ մարմնոյն, / Ձեռօք աւեր առնէ գիւր տուն»:

Անցեալ շաբաթ, կը լիչէ՞ք, խոստացեր էի, թէ պիտի վերադառնար գարունը, ծիլ ու ծաղիկ պիտի ըլլար ու մեր երկիրը կրկին պիտի վերածուէր բուրու մնաւէտ դրախտավայրի մը: Ուստի, յօդուածիս հրաժեշտ կու տամ մէջքերելով կարնոյ Սալաձոր գիւղի մէջ ծնած «որբիկ» Դաւիթ Սալաձորցիի «Գովասանք ծաղկանց» իւրապատուկ տաղը: Հոն գովերգուած են Հայկական լեռնաշխարհի շուրջ հարիւր տեսակ ծաղիկներ, «Սուսամն գուլգազ է ներկած, գունն է գլուխ կարմիրներուն, միշտ գեղեցիկ է, խիստ պայծառ, բուսնի մէջ պաղ աղբուրներուն: Ձամբիւղ ծաղիկն հոտովն անուշ, ինքն սպիտակ-կարմրագուն, նարդոս ծաղիկն ու կինամոն լցուել են Աստուծոյ բարուն: Այն նունուֆար ծաղիկն որ կայ, բուսնի յեզերս ջրերուն, օձերն գինքն կու պահեն, մարդ չի քաղել նոցա ահուն: Այն համասփիւռ ծաղիկն որ կայ, ծաղկել ծաղկովն հագարագոյն, կոյր աչերուն լոյս կու բերէ, թէ Տէրն տայ աղամորդուն»:

(Յաջորդ յօդուածը. Նահապետ Բուշակ, Պաղտասար Դպիր, Պետրոս Ղափանցի եւ վերջապէս՝ Նաղաշ Յովնաթան):

Չինացի Հանդիսատեսը Տպաւորուած

Շարունակուած էջ 8-էն

Չինաստանի Armstrong International Music եւ Անգլիայի Wright Music Management գործակալութիւնների միջնորդութեամբ, ՀՀ ԿԳՄՍ եւ ԱԳ նախարարութիւններին, ՀԲԸՄ-ի, «Իմ քայլը» հիմնադրամի, Չինաստանի ժողովրդական Հանրապետութիւնում ՀՀ

դեսպանութեան՝ ի դէմս ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Սերգեյ Մանասարեանի, եւ այլ բարերարների աջակցութեամբ:

Այս հիւրախաղերի կազմակերպումը հայ-չինական բարեկամութեան ամրապնդման ուղղուած եւս մեկ կարեւոր քայլ էր, որն, անկասկած, կ'ունենայ իր յետագայ շարունակութիւնը:

Ս. ԾՆՈՆՈՂ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅԱՅՈՒՄՈՒՔԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 25 ԵՒ ՅՈՒՆՈՒԱՐ 6 ԱՆՈՒԱՆԱԿՈՂՈՒՔԻՆ ՅՈՒՆՈՒԱՐ 13

ԴՈՎՏ. ՋԱԻՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Ի՞նչ է Տարբերութիւնը

Քրիստոնեայ աշխարհը փրկչին Սուրբ Ծննդեան տօնը յիշատակեց, մեծագոյն մասամբ Դեկտեմբեր 25-ին, իսկ Հայ Եկեղեցին աւանդական թուականին՝ Յունուար 6-էն մինչեւ Ութօրէք երբ ամսուն 13-ին անշարժ կերպով պիտի տօնէ Տիրոջ Անուանակոչութիւնը: Սկիզբէն ըսած ըլլամ որ թուականները շատ երկրորդական հարցեր են, իսկ կենսականը՝ Փրկչին Մարդեղութիւնը:

Սովորական մտածողութեամբ ամէն տարի մակերեսային նոյն հարցը կը լսենք թէ ինչու թուականին երկուութիւնը, աւանց անդրադառնալու Աստուծոյ որպէս Մարդ (Incarnation) յայտնուելու ամենէն հիմնական իրողութեան, որուն պէտք է ուղղուած ըլլան հետաքրքրութիւնները քան թէ պարզ թուանշաններուն: Մերօրեայ հասարակ ծննդեան տարեդարձներու արձագանքն է անշուշտ որ բոլորովին կը նսեմացնէ Փրկչին Ս. Ծննդեան խորհուրդը: Կանուխէն նաեւ գիտնալու ենք որ երկու թուականներն ալ ստուգուած չեն Աւետարաններէն որ ինքնին կը հաստատէ թիւին անկարեւոր ըլլալը: Աւետարանիչներ որոնք աւելի ուշ գրեցին, ինչպէս բոլոր եղելութեանց մասին, նոյնպէս նաեւ Փրկչի ծննդեան մասին, իրենք իսկ չէին գիտեր որքան ատեն որ չեն նշած որեւէ թուական, զանոնք գուշակելով դէպքերու եւ կամ տարուան չորս եղանակներու յարաբերութեամբ:

Յունուար 6

Սկզբնական եւ աւանդական թուականը Յունուար 6-ը եղած է զոր նախնազօյն եկեղեցին մինչեւ Նիկիոյ Տիեզերական Ա ժողովը (325) ճանչցած է որպէս Աստուածայայտնութիւն եւ ոչ որպէս Ծնունդ, եւ իբր այդ փոխանցուած մինչեւ 381 թուի Կ. Պոլսոյ Տիեզերական Բ ժողովը: Մինչդեռ Հայ Եկեղեցին որ Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակած էր աւելի կանուխէն 301 թուականին, աւանդական Յունուար 6-ը որպէս Յայտնութիւն կը տօնէր անոր անմիջապէս կցելով նաեւ Ծնունդը Յիսուսի՝ Աւետարանական շատ պարզորոշ տուեալներուն հիմամբ:

Հռոմէական կայսրութիւնը չէր ընդունած Քրիստոնէութիւնը որպէս պետական կրօն, այլ միայն Կոստանդիանոս Մեծ կայսեր (288-337) օրով Միլանի Դաշնագրով «որպէս թոյլատրեալ կրօն» յայտարարուած էր կայսրութեան մէջ այլ կրօններու շարքին: Հռոմէական կայսրութեան Բիւզանդիոնի (Նոր Հռոմի) Գահն էր կշիռ ունեցողը քան թէ Իտալիոյ Հին Հռոմի գահը, երբ Թէոդոսիոս Ա Բիւզանդիոնի կայսեր (379-395) կողմէ որպէս միահեծան կայսր, Քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուեցաւ Հայաստանէն ուսթսունեամեակ մը ետք, երբ այն ատեն միայն պիտի մտածէին Ս. Ծննդեան թուականի մասին, հետեւելով կա՛մ աւանդական Յունուարին եւ կա՛մ յարմարցնելով նոր թուական մը ինչպէս որ ըրին:

Դեկտեմբեր 25

Հռոմէական կայսրութեան հա-

մար Քրիստոնէութեան «թոյլատրեալ կրօն» ըլլալը վերածուեցաւ պետական կրօնի Թէոդոսիոս Ա կայսեր հրովարտակով, երբ Տիեզերական Բ ժողովն ալ ինք հրաւիրեց 381 թուականին, բոլոր Քրիստոնեայ եկեղեցիներու մասնակցութեամբ՝ հաստատելով նաեւ Կ. Պոլսոյ Տիեզերական Պատրիարքութիւնը: Կարելի է ստուգապէս ընդունիլ որ այդ ժողովը հաստատեց Քրիստոնէութեան որպէս կայսերական պետական կրօն հռչակումը Կայսեր հրովարտակով, որ իր կարգին հռչակեց Դեկտեմբեր 25-ի Ծննդեան թուականը, յարմարցնելով զայն որպէս Քրիստոնէութեան գլխաւոր յիշատակ: Կարեւոր էր այդ թուականը այն իմաստով որ այն պիտի փոխարինէր նոյն օրուայ Սաղոմոնէլ չաստուածի պաշտամունքը, վստահ ըլլալով որ կարելի պիտի ըլլար խափանել հինը եւ նորը հաստատել:

Ուրեմն յայտնի կը դառնայ Յունուար 6-ի աւանդական եւ աւելի ընդունելի թուականը քան թէ բռնազբօսիկ կերպով յարմարցուած Դեկտեմբերի 25-ի օրը, երբ նկատի ունենանք նաեւ որ Աստուածայայտնութիւնն ալ չմիացնելով Ծննդեան տօնին, զայն յետաձգեցին Յունուարի 6-ին: Հայեր անխախտ մնացին աւանդական թուականին վրայ Ծննդեան միացնելով նաեւ Փրկչին Մկրտութիւնը նոյն Յունուար 6-ին:

Յիսուսի Մկրտութիւնը

Հայ Եկեղեցին միակն է որ Յիսուսի Մկրտութիւնը կը տօնէ իր Ծննդեան օրը՝ Զորհնէքի յատուկ ծիսակատարութեամբ, յաւարտ Ս. Պատարագի: Սա չի նշանակեր որ Յիսուս որպէս նորածին մանուկ մկրտուեցաւ: Անշուշտ ոչ: Աւետարանները կը գրեն թէ իր երեսուն տարիքին Յիսուս Յորդանան գետ եկաւ մկրտուելու Յովհաննէս Մկրտիչէն որուն ծանօթ էր եւ տարեկից: Յովհաննէս խոնարհեցաւ Յիսուսի առաջ եւ ինքզինք արժանի չնկատեց զինք մկրտելու, եւ սակայն Յիսուսի կրկնակի առաջարկին վրայ Մկրտիչն Յովհաննէս մկրտեց Յիսուսը իր հասուն տարիքին, որմէ ետք 40 օրեր անապատ քաշուեցաւ ապաշխարելու, փորձուելու, եւ ապա վերադառնալու իր առաքելութեան:

Դարձեալ թուականի չզօյնութեան պատճառաւ, Հայ Եկեղեցին Ս. Ծննդեան տօնին վրայ Մկրտութեան պահուն Աստուածայայտնութեան կնիքը դրաւ, ըստ Աւետարաններուն, երբ Հայրը ի վերուստ ուղարկեց աղանակերպ Ս. Հոգին ձայնելով որ «սա է իմ սիրելի Որդին որուն ես հաճեցայ»: Առաջին անգամն ըլլալով Սուրբ Երրորդութիւնը միասնաբար կը յայտնուէր աշխարհին: Որպէս լրումն Ծննդեան, Աստուածայայտնութեան դրոշմը կը դրուէր այս անգամ Յիսուսի Մկրտութեան պահուն ու Հայ Եկեղեցին իրաւամբ զոյգ տօները կը միացնէր Յիսուսի Մարդեղութեան պատմական իրողութեամբ:

Մարգարէութեանց Նախատեսութիւնը

Հին Կտակարանէն կ'աւանդուէր Յիսուսի ծննդեան պարագաները անունով եւ Բեթղէհէմի յիշատակութեամբ: Մարգարէներ կ'ա-

ւետէին Կոյսին ծնունդը եւ Որդւոյն էմանուէլ կոչումը իր ծնունդէն հարիւրաւոր տարիներ առաջ, որ եղաւ առաջին անունը Յիսուսի որ կը նշանակէր «Աստուած մեզ հետ» (Եսայի 7:14, 8:8): Աւետարանիչներ մէջբերելով մարգարէներուն նախատեսածը Յիսուսի ծննդեան առիթով կրկնեցին էմանուէլ անունը, որ ինքնին «ծնունդ» կը նախատեսէր, այսինքն «Աստուած մեզ հետ պիտի ըլլար», ինչպէս որ եղաւ Բեթղէհէմի մտուրին մէջ: Յաւիտենական պատգամ մըն էր տրուածը այդ առաջին կոչումով, որուն պիտի պատասխանէին սերունդներ արդեօք անոնք ալ Աստուծոյ հետ պիտի ըլլային: Երանի թէ ըլլային: Աշխարհն այսօր մոռցած է էմանուէլը եւ յարած ամէն բանի բացի Աստուծոյ:

Բարեբախտաբար Եկեղեցին ընդհանրապէս տակաւին կուտայ նոյն հարցումին դրական պատասխանը, հոգ չէ թէ նուազած ձայնով աշխարհի ժողովին ընդմէջէն: Դուները բաց են միշտ եւ հաւատացեալներ կը մտնեն ներս հաղորդուելու էմանուէլին հետ եւ իր անունով Աստուծոյ պատասխանելու թէ «մենք ալ քեզ հետ ենք», ինչպէս Յայտնութեան Գիրքին մէջ ալ ըսուած է, «կը բաղին մը դուռը եւ կ'ուզեմ ընթրել քեզ հետ», սակայն դուռը ներսէն կը բացուի, դուն պիտի բանաս զայն որ Տէրը մտնէ եւ բաժնեկից ըլլայ ընթրիքիդ:

Անուանակոչութիւնը Տեառն

Ծննդեան տօնը Հայ Եկեղեցին կը յիշատակէ ութ օրեր, եւ լրման կը հասցնէ Յունուար 13-ի Անուանակոչութեամբ՝ անշարժ թուականով: Էմանուէլ մարգարէաշունչ անունը Նոր Կտակարանով հրեշտակային իսկական Յիսուս անունով կը փոխարինուի երբ «Յիսուս պիտի կոչես զինք» ըսաւ հրեշտակը, որ կը նշանակէ ան որ մարդիկ



պիտի մաքրէ իրենց մեղքերէն: Ծննդեան օրն իսկ Աւետարանը կ'ըսէ թէ նաեւ Օծեալը (Մեսիան) պիտի ըլլայ Ան, որուն յունարէն թարգմանութիւնն է Քրիստոս: Նաեւ Ան «Որդի Աստուծոյ» պիտի կոչուի, քանզի «Փրկիչ ծնաւ մեզ»: Կը տեսնենք անուններ՝ Յիսուս, Քրիստոս, Փրկիչ, Որդի Աստուծոյ, որոնք Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան ճշգրիտ արտայայտութիւնները կը հանդիսանան:

Իր Մկրտութենէն եւ փորձութիւններէն ետք Յիսուս իր յիշեալ հինգ անուններուն տէրը կանգնեցաւ ու ձեռնարկեց իր առաքելութեան: Երբ կը քարոզէր ու հրաշքներ կը գործէր, Յիսուս այս անգամ «ինքզինք» անունով մը եւս կոչեց՝ «Որդի Մարդոյ», վստահեցնելով որ ինք մարդացեալ Աստուածն էր որ երկիր իջաւ, ծնաւ որպէս մարդ ու Հայր Աստուծոյ ներկայութիւնը հաստատեց մարդոց մէջ, այդ անունը յատկացնելով իրեն գալիք չարաբաններուն ու խաչելութեան: Ի վերջոյ եօթներորդ անուն մը եւս տրուեցաւ իրեն իր Համբարձումէն ետք ըստ Պօղոս Առաքեալի Փիլիպեցոց Թուղթին, ուր Քրիստոս ստացաւ անուն մը որ «բոլոր անուններէն վեր եղաւ եւ բոլորը ծունկի եկան այդ անունին առջեւ»: Վասնզի ինք Տէ՛ր կոչուեցաւ բոլորէն, «եւ ամէն լեզու թող խոստովանի թէ Տէ՛ր է Յիսուս Քրիստոս՝ ի փառս Հայր Աստուծոյ» (Փիլ 2:11):

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____

Address: _____

City: _____ State: _____ Zip Code: _____

Country: _____

Tel: _____ Email: _____

Սուրբ Ծնունդը Սիաթլի Ա. Յարութիւն Եկեղեցում



Յունուար 5-ի երեկոյան ճրագալույցի եւ Յունուար 6-ի առաւօտեան մատուցուող սուրբ ծննդեան պատարագները սկսուեցին «Հայր Մեր» Տէրունական աղօթքով: Հարիւրաւոր հաւատացեալների աղօթասաց սրտերը լցուել էին եկեղեցում տիրող հոգեւոր անպատմելի գագաթնակէտէրէ: Կարծես՝ իւրաքանչիւրի աչքերը սեւեռուել էր Բեթղէմեան աստղին, եւ հետեւում էր արեւելքից դէպի Ծննդեան մատուրը ընթացող մոգերի ամէն մի քայլին, ականջալուր լինում հովիւներին ուղղուած հրեշտակի յորդորին, որոնց նա ասաց. «մի վախեցէք, որովհետեւ ձեզ մեծ ուրախութիւն եմ աւետում, որը ամբողջ ժողովրդինը կը լինի»: Այդ Մեծ ուրախութիւնը կրկնապատկուեց, երբ պատարագիչ Տէր հայրը՝ Սուրբ Յարութիւն եկեղեցու հոգեւոր հովիւ Տէր Վազգէն քահանայ Պոյաճեանը, իր քարոզի սկզբնաւորութեան, սուրբ խորանից ողջունեց հաւատացեալներին՝ «Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ» աւետիսով, որին ներկաները պատասխանեցին՝ «օրհնելի է Յայտնութիւնը Քրիստոսի» օրհներգութեամբ:

Հաւատացեալներին ուղղուած իր քարոզում Տէր Հայրն ասաց. «ողջ աշխարհը լցուած է Տիրոջ Սուրբ Ծնունդի աւետիսով, որով սկիզբ է առնում աստուածային սէրն ու ուրախութիւնը: Տիրոջ ծնունդով երկրի վրայ հաստատուած է խաղաղութիւն, թշնամի սրտերում կնքուած է հաշտութիւն, մէկտեղուած են իրարից հեռացած ընտանիքներ: Այս է սուրբ ծննդեան հրաշքը, որին կարօտ է, եւ որին փափաքում է ողջ մարդկութիւնը»:

Տէր Հայրը շնորհաւորեց նաեւ Հիւսիսային Ամերիկայի Թեմի բարեխնամ առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արքեպս. Տէրախնային՝ աղօթելով սրբազան հօր՝ երկար տարիների արդիւնաբեր ծառայութեան համար:

Տէր Վազգէն քահանայ Պոյաճեանը շնորհաւորանքի եւ շնորհակալական խօսքեր ուղղեց նաեւ Թեմական եւ Միսակա խորհրդի անդամներին, թեմի հոգեւորականներին, խորանին սպասարկող սարկաւազներին, «Նանոր» երգչախումբին,

Սուրբ Յարութիւն վարժարանի ուսուցչական կազմին, Տիկնանց եւ Երիտասարդաց յանձնախմբերին եւ բոլոր յարակից մարմիններին՝ մաղթելով նրանց ապրել Յիսուս Քրիստոսի՝ սիրով լի ներկայութեամբ եւ օրհնութեան ներքոյ:

Յունուար 6-ի առաւօտեան մատուցուեց Սուրբ պատարագ, որի աւարտին, Ջրօրհնեաց արարողութիւնից առաջ, Տէր հայրը ուրախութեամբ չափարարեց, որ այս տարուայ կնքահօր՝ Յովհաննէս Մկրտչի պատասխանատուութիւնը սիրով յանձն է առել գաղութի սիրուած եւ համայնքի եկեղեցու համար ոչ մէկ ջանք ինչպէս յարգարժան Հրաչ Ոսկանեանը, ով ընտանեօք հանդերձ, հաւատարմութեամբ ծառայել եւ ծառայում է Հայ Եկեղեցուն: Ի նշան Եկեղեցու հանդէպ ունեցած անսահման սիրոյ եւ հաւատարմութեան՝ պրն. Հրաչ Ոսկանեանի բարերարութեան շնորհիւ Երեւանի Եւաբլուրում, Արցախի նահատակ զինուորների շիրմների կողքին, կառուցուեց Ս. Վարդանանց Եկեղեցին: Տէր հայրը, շնորհաւորելով եկեղեցու արժանաւոր գաւակի պրն. Ոսկանեանին, մաղթեց, որ այս կարեւոր եւ աստուածահաճոյ յանձնառութիւնը նոր օրհնութիւններով լցնի նրա ընտանիքը:

Պատարագի աւարտին հաւատացեալներին բաժանուեց օրհնուած եւ միւռնոսուած ջուր՝ Յորդանան գետը խորհրդանշող կաթսաներից, որից յետոյ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ կազմակերպուած Տիկնանց Յանձնախմբի կողմից:

Մանուկների Ամանորեայ Եւ Ա. ԾՆՆՈՒԵԱՆ Խրախճանք Շաբաթ, Դեկտեմբեր 21

Նորից փայլում էին տօնածառի լույսերը, այս անգամ Սիեթլի Hilton Garden Inn հիւրանոցի սրահում: Հերթական գեղեցիկ ու հարուստ բովանդակութեամբ միջոցառումն էր՝ վառ, գունազեղ ու հայեցի ոքով: Մակայն այս անգամ այն կազմակերպել էին՝ Հայ մշակութային միութիւնը, Ս. Յարութիւն եկեղեցին եւ նրան կից հայոց

վարժարանը: Միջոցառումն սկսուեց մեր հմուտ հաղորդավար՝ Հայկի ողջունով: Ապա դահլիճը լցուեց հայ ընտանիքում տիրող աւանդութիւններով, սիրով, երգ ու պարով, հայկական օճախին բնորոշ հիւրասիրութեամբ եւ քրիստոնէական ու ազգային սովորութիւններով: Վարժարանի սաները Տիկ. Վարսերի եւ Տիկ. Շողիկի գլխաւորութեամբ հանդէս եկան ժողովրդական եւ տօնական երգերով, իսկ

պապի այցով: Ուրախութեամբ ուզում ենք ասել, որ մի մեծ ընտանիք է դարձել մեր համայնքը՝ հայոց եկեղեցու հովանու ներքոյ: Աղօթք եւ Մոմավառութիւն Դեկտեմբեր 24-ին՝ երեկոյեան ժամը 6-ին, Սիաթլի Սուրբ Յարութիւն եկեղեցու հոգեւոր հովիւ արժանապատիւ Տէր Վազգէն Քահանայապետի օրհնութեամբ սկսուեց գոհաբանական աղօթք, ապա եկեղեցուց «Նանոր» Դպրաց Դասի



պարուստից Ստելլայի գլխաւորութեամբ ներկայացրեցին մեր ազգային պարերի տարրերը: Տօնը առանձնացաւ իր գեղեցիկ անակնկալներով՝ անպարարով, խաղերով, մրցոյթներով եւ նուէրների տեսքով:

Միջոցառման ընթացքում Տէր Վազգէն քահանայ Պոյաճեանը, ջերմ ողջոյնով շնորհակալութիւն յայտնեց կազմակերպիչներին, ուսուցիչներին եւ ծնողներին: Իսկ վարժարանի տնօրէն՝ Տիկն. Ալինան բեմ հրաւիրեց վարժարանի բոլոր ուսուցիչներին եւ Տէր հօր միջոցով շնորհակալութիւն յայտնեց փոքրիկ նուէրներով:

Ինչպէս միշտ ամէն տօնածառի հանդէս, այս անգամ եւս միջոցառումն աւարտուեց երեխաներին ցանկալի եւ շատ սիրելի Ձմեռ

եւ ներկայ հաւատացեալների կողմից հնչեցին հայ եւ օտար կատարողների սիրուած ու յայտնի երգեր՝ նուիրուած Սուրբ Ծննդեան տօներին: Ներկաների ուրախ եւ խանդավառ տրամադրութիւնը ստեղծել էր Սիրով ու խաղաղութեամբ լի մթնոլորտ:

Արարողութեան աւարտին հոգեւոր հովիւը արտայայտեց իր գոհունակութիւնն ու ուրախութիւնը՝ նշելով, որ այսօրեայ աղօթքով Սիաթլի Սուրբ Յարութիւն Եկեղեցու համայնքը միանում է այն բոլոր քոյր եկեղեցիների աղօթքներին, որոնք նշում են Սուրբ Ծնունդը Դեկտեմբեր 24-ին:

Սուրբ Ծննդեան ուրախ տրամադրութիւնը շարունակուեց Տիկնանց Յանձնախմբի կողմից պատրաստուած սիրոյ սեղանի շուրջ:

Ո՞վ Աւելի Մաքուր Հայերն Կը Գրէ

Շարունակուած էջ 13-էն

Խեղճ արարածներ: Տգիտութեան մէջ տուայտող խեղճուկներ:

Ես կը միտիմ հաւատալու որ այն հայերը, այն հայ կիսամտաւորականները, որոնք գիտակցաբար օտար բառեր կը գործածեն իրենց գրութիւններուն եւ արտայայտութիւններուն մէջ, կը դաւաճանեն հայերէն լեզուին: Անոնք այն «հայ դաւաճաններ» են, որոնց համար մաքուր հայերէն խօսողներուն «լեզուները կը կտրեն» որպէսզի իրենց «հայերէնատգիտութիւն» երեւան չգայ: Մեր սուրբ լեզուն, որ հազարամեակներու ընթացքին մշակուած է եւ մեզի կտակուած է Վահագնի, Անահիտի ու Աստղիկի պաշտամունքը կատարող գուրմերէն, Վարդանանց պատերազմի մէջ հերոսաբար նահատակուող մեր նախահայրերէն, Սուրբիոյ անապատներու աւազներուն վրայ Ա. Բ. Գ սորվեցնող սուրբ մայրերէն եւ որբերու սերունդներէն, երբ կը դաւաճանուի, այդ դաւաճաններուն եւ Ատրպէյճանի ու Թուրքիոյ համար լրտեսութիւն ընող, մեր բանակի հերոս տղոց հացը արջերուն կերցնող, պատերազմի ժամանակ գէնք ու փամփուշտ կլացող դաւաճաններէն ինչպէ՞ս կը տարբերին, կրնա՞ք բացատրել ինձի:

Եթէ վիրաւորուեցաք, շատ լաւ եղաւ: Եթէ չեք ուզեր որ վիրաւորենք ձեզ, ուրեմն այդ օտարտի բառերէն հրաժարեցէ՛ք եւ մաքրեցէ՛ք մեր լեզուն: Հայերէն լեզուի ձեր սանձարձակ եւ անպատասխանատու գործածութեամբ՝ մի՛ վիրաւորէք մեզ:

Ես ասպարէզ կը կարդամ Հայաստանի «հայ մտաւորական»ներուն, կիսամտաւորականներուն, մամուլի ծառայողներուն, պետական այրերուն ձեռքազատուիլ օտար բառերէն եւ սկսիլ միայն հայերէն բառերով իրենց միտք ու հոգին արտայայտել: Եթէ անշուշտ այդքան մը հայերէն գիտեն:

Եթէ կ'ուզէք յարգուիլ որպէս «հայ մտաւորական», ուրեմն մաքուր հայերէնով խօսեցէք եւ գրեցէք: Եթէ կ'ուզէք յարգուիլ որպէս «հայ քաղաքական գործիչ», ուրեմն մաքուր հայերէն խօսիլ սորվեցէք եւ մաքուր հայերէնով արտայայտուեցէք:

Մաքուր եւ լաւ հայերէն սորվիլը կը սկսի տունէն, ապա մակապարտեցի գրասեղաններէն մինչեւ համալսարանի ամպիոնները:

Մենք, սփիւռքահայերս, կրնանք օգնել ձեզի: Յարգեցէ՛ք մեր լեզուն, որպէսզի մենք ալ յարգենք ձեզ: Այսօր՝ այսքան միայն:

Ջօրացիւք Օժանդակենք Փրկենք

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

Նոր Տարուան Առաջին Շաբաթներուն Ընթացքին Ի՞նչ Կարելոր Բաներ Պետք է Ընել

1) Կարգաւորել օրուան ընկերներուն ցանկը: Եթէ վարժուած էք օրուան տարբեր ժամերուն քնանալ ու արթննալ եւ ոչ մէկ կանոնի հետեւիլ, ժամանակն է փոխել այս քառասուն մասնաբաժինը: Սկսելով քնանալ ու արթննալ միեւնոյն ժամուն՝ արդէն մէկ շաբաթ անց պիտի նկատէք դրական փոփոխութիւններ եւ տրամադրութեան, եւ ինքնազգացողութեան մէջ:

2) Կանոնաւոր կերպով ընկերներու ցանկ կազմել եւ կատարել զանոնք մինչեւ վերջ: Ընելիքներու ցանկ կազմելը՝ ամէնօրեայ գործերէն մինչեւ ամէնամսեայ, ամէն ինչ իրար չխառնելու պարզ եւ արդիւնաւէտ միջոց է՝ ըլլալ ընտանիքի կամ հետաքրքրութիւններու համար ժամանակ գտնելէն մինչեւ աշխատանքային ընկերներն ու խիստ ժամանակային սահմանափակումներով նախագիծերու իրականացումը:

3) Երթալ այնտեղ, ուր շատոնց կ'ուզէք երթալ: Կարելի է այս տարի նոյնպէս ժամերով նստիլ հեռատեսիլին առջեւ կամ տարբեր խաղեր խաղալ: Բայց կարելի է նաեւ շաբթուան ընթացքին 1-2 օր գտնել՝ որեւէ անծանօթ վայր կամ երկիր այցելելու համար, ուր մոտքի համար վրձա չի պահանջուիր:

4) Կանոնակարգել սննդակարգը եւ սննդականոնի սկսիլ: Ամանորի շատակերութեան շրջանը աւարտեցաւ եւ հարկ է վերադառնալ բնականոն կեանքին: Այնքան ալ բարդ չէ հետեւիլ կշիռին եւ սնունդի քանակին ու որակին: Եթէ կը կարծէք, թէ բնականոն սնունդը համար խիստ սննդականոնի անհրաժեշտութիւն կայ, կարդացէք, թէ ինչպէս կարելի է կորսնցնել աւելորդ քիլոկրամները՝ պարզապէս մտածուած եւ գիտակցուած ուսելով:

5) Մարմնամարզանքով զբաղիլ: Եթէ կը կարծէք, թէ մասնագիտական մարմնամարզանքը ձեզի համար չէ, այդ պատճառով պէտք չէ դուք ձեզ ծանրաբեռնէք մարզանքներով, կը սխալիք: Սկսեցէք պարզ վարժութիւններով. փորձեցէք ամբողջ ընտանիքով վազել:

6) Հրաժարիլ հեռատեսիլէն: Հեռատեսիլը ժամանակը կլանող տարածուած միջոց է: Եթէ քայլի գովազդով, համեմուտ կասկածելի արժէքով եւ որակով հաղորդումներ, ցածրորակ կատակերգութիւն եւ հին ֆիլմեր, որոնք կը ցուցադրուին օրեր շարունակ. իսկապէս կ'ուզէք այս ամէնով լեցնել ձեր օրը:

7) Սկսիլ օտար լեզու սորվիլ: Այսօր բազմաթիւ առցանց ծառայութիւններ կան օտար լեզուներ ուսումնասիրելու համար: Սկսիլ:

8) Քեզի համար նոր նախասիրութիւն բացայայտել: Հետաքրքրութիւններն ու նախասիրութիւնները կեանքի մէջ նորոյթ կը մտցնեն, նորանոր հորիզոններ բացայայտելու հնարաւորութիւն կ'ընձեռեն եւ պարզապէս կը նպաստեն մտաւոր աշխուժութեան: Իսկ «աշխատանքի փոփոխութիւնը հանգիստ է», այնպէս չէ՞:

9) Հրաժարիլ մարդոց դատապարտելու եւ գոյութիւն չունեցող բաներու մասին վիճելու սովորութենէն: Դուք ձեզի խոստացէք՝ ոչ մէկ վիճաբանութիւն կրօնի, քաղաքականութեան, հասարակական կարգի մասին, մարդոց ոչ մէկ դատապարտում հասակի կամ հագուստի գոյնի, սանտրուածքի եւ նման բաներու համար: Սկսեցէք աշխարհը տեսնել իր բազմազանութեամբ: Կարծես պարզ, բայց համալիր խնդիր է: Ատոր մէկ օրուան մէջ հասնիլ անհնար է, բայց, հաւանաբար, արժէ փորձել:

Մանրութներ, Որոնք Տղամարդը Գաղտնի Կ'ակնկալէ Կնոջմէ

1) Սորվեցէք լսել նոյնիսկ դատարկ բաները: Օրինակ՝ աշխատանքային երկար օրէն ետք ան կ'ուզէ գրուցել ձեր հետ, իսկ դուք կը վանէք, թէ «յոզում եմ», եւ կ'երթաք: Այդ պահուն ատիկա կրնայ սարսափելի չթուիլ, սակայն եթէ պարբերաբար կրկնուի, թոյլ չի տար ստեղծելու վստահութեան մթնոլորտ:

2) Զգտեցէք պահպանելու դրական տրամադրուածութիւնը: Մանրութները անկարելորդ չեն, եւ ձեր տղամարդը պիտի նկատէ զանոնք: Յաճախ ժպտեցէք: Յիշեցէք, որ կարելորդ է ոչ միայն թէ ինչ կ'ըսէք, այլ նաեւ թէ ինչպէս կ'ըսէք:

3) Մի քննադատէք: Սորվեցէք քննարկել ձեր խնդիրները: Պէտք չէ պաշտպանողական դիրք բռնել: Սորվեցէք պատասխանատուութիւն կրել ձեր վարքին համար եւ կառավարել զայն:

4) Ըսէք տղամարդուն, թէ որքան շատ կը սիրէք եւ կը գնահատէք զինք: Որքան ալ ձեզի համար դժուար ըլլայ, իւրաքանչիւր կ'ուզէ լսել գովեստի խօսքեր: Անոնք ոչ մէկը կը ձանձրացնեն: Եւ որքան յստակ ըլլան ձեր խոստովանութիւնները՝ թէ ինչու կը սիրէք զինք եւ կը գնահատէք, այնքան լաւ:

5) Հետեւեցէք ձեր կենսակերպին: Ատիկա կը նշանակէ հանգըստանալ, ճիշդ սնուիլ եւ մարզուիլ: Հոգեբանօրէն մի ծանրաբեռնէք

ձեզ: Մինչեւ ուրիշներուն մասին մտածելը, մենք պէտք է սորվինք նախ մեր մասին մտածել:

6) Սորվեցէք կարեկցիլ: Պարզապէս մի լսէք անոր, այլ նաեւ կարեկցեցէք, երբ ան կը կիսուի իր մտահոգութիւններով: Այդ պահուն ան պիտի զգայ ձեր հոգատարութիւնը:

7) Ընդունեցէք անոր խորհուրդները: Ընդունեցէք զանոնք հաճոյքով: Ատիկա կարելորդ է ձեր յարաբերութիւններուն համար:

8) Մի տարուիք հեռախօսով: Յատկապէս երբ ժամանակը ձեր երկուքին համար է, մէկ կողմ դրէք հեռախօսը: Միասին հետաքրքրական ժամանակ անցուցէք: Անկեղծ հարցեր տուէք եւ լսեցէք պատասխանները:

9) Պատրաստ եղէք հոգալու ձեր յարաբերութիւններուն: Բոլոր յարաբերութիւններուն մէջ կ'ըլլան եւ լաւ, եւ վատ ժամանակներ: Անոնց պէտք է պատրաստ ըլլալ: Պէտք չէ շտապ հետեւութիւններ ընել: Բնական է, երբ կը համաձայնի կամ չեն համաձայնիր իրարու հետ:

10) Ստատեցէք անոր երազանքներուն: Ընտանեկան հոգերուն պատճառով դիւրին է երազանքներուն մասին մոռնալը:

Փորձեցէք ուժ տալ իրարու, որպէսզի ամէն պարագայի իրականացնէք երազանքները:

Գեղեցկուհի Չէ, Բայց Գրաւիչ է

Կանանց յատկանիշեր, որոնց կողքէն տղամարդիկ անտարբեր չեն կրնար անցնիլ

Տղամարդոց հաճելի թուելու համար արտաքին տեսքը բաւարար չէ: Կան շարք մը գործօններ, որոնք կանացի գրաւչութեան իրական գաղտնիքներն են: Այսպէս՝

Քայլուածք- Տղամարդիկ յատուկ ուշադրութիւն կը դարձնեն քայլուածքին: Այնպէս որ՝ գլուխը բարձր պահեցէք, մէջքը՝ ուղիղ:

Հայեացք- Կանայք ունին տղամարդը հայեացքով գրաւելու ունակութիւն:

Ժպիտ- Մէկ ժպիտը երբեմն հրաշքեր կրնայ գործել:

Հագուստ- Հագուստը կ'ամբողջացնէ կնոջ կերպարը:

Հագուստի միջոցով կարելի է անմոռանալի տպաւորութիւն ստեղծել:

Հաճելի բոյր- Ընտրեցէք այնպիսի բոյր, որ ձեզի հոգեհարազատ է:

Տօներէն Ետք Վերականգնելու Կազմուածքը

Տօներն արդէն աւարտած են, եւ ժամանակն է մաքրելու մարմինը իւրոտ եւ բարձր ջերմութ ունեցող սնունդի հետեւանքներէն ու վերականգնել կազմուածքը, որ հաստատ տուած է այս օրերուն ընթացքին: Այո՛, ամանորեայ ճոխ սեղաններուն դիմակայելը դժուար է, սակայն միայն օրեր անց կը հասկնաս, թէ որքան չարաշահած ես ուսելիքը: Հիմա ժամանակն է վերականգնելու կառուցուածքը: Ներկայացնենք պարզ քայլեր, որոնք պիտի օգնեն ձեզի այդ հարցով:

Բեռնաթափման օր նշանակեցէք, որուն ընթացքին ոչինչ կերէք՝ մաքրելով մարմինը եւ նախապատրաստելով զայն թեթեւ սնունդին: Նման օրերուն կարելի է միայն խնձոր ուտել:

Երբ բեռնաթափման օրը յաղթահարուած է, յաջորդ քայլը թեթեւ սնունդի անցնիլն է: Աշխատեցէք ուտել բանջարեղէն, պտուղ, իսկ տապակուած սնունդը փոխարինել եփածով:

Աղցանները պէտք է ըլլան առանց մայրնեղի: Մսամթերքէն նախապատուութիւնը տուէք թռչնամիսին եւ ձուկին:

Ոչ մէկ խմորեղէն կամ հացի տեսակ: Եթէ քաղցրի պահանջ շատ կը զգաք, կրնաք պտուղ ուտել կամ



ալ առանց շաքարի պատրաստուած չիրի տեսակներ:

Օգտագործեցէք շատ հեղուկ, որ դրական կ'ազդէ մարմնի նիւթափոխանակութեան գործընթացին վրայ:

Եւ, ի հարկէ, ձեր ջանքերը արդիւնք չեն տար, եթէ շարունակէք բազմոցին պառկած մնալ, ինչպէս հաւանաբար ըրած էք տօնական օրերուն: Շատ շարժեցէք, զբաղեցէք մարմնական աշխատանքով, եւ պիտի տեսնէք, թէ ինչպէս աւելորդ քիլոկրամները աստիճանաբար կ'անհետանան:

Չինացի Կիներու Երիտասարդութեան Եւ Գեղեցկութեան Գաղտնիքները

Բոլորին յայտնի է, որ ասիացիները, մասնաւորապէս՝ չինացի կանայք, ունին երիտասարդ եւ թարմ տեսք: Անոնց մաշկը կնճռոտ չէ, այլ՝ հարթ եւ առողջ գոյնով: Նոյնիսկ 45-50 տարեկան չինացի կանայք նման են երիտասարդ 25-ամեայ աղջիկներու: Ո՞րն է գաղտնիքը: Անոնք ինչպէս կրնան կանգնեցնել ձեր արցունքը:

Չինուհիները կ'օգտագործեն մեծ քանակով զարդադեղեր՝ նախընտրելով բնական հումքեր:

Չինացի կանայք կը նախընտրեն մեղմ գոյներ՝ կարծելով, թէ մուգ հագուստը տեսողականօրէն կը մեծցնէ տարիքը:

Անոնք կը սպառեն շատ քիչ շաքար եւ քաղցր ուտելիքներ՝ նախընտրելով կոճապղպեղի արմատով խմիչքներ:

Չինուհիները նաեւ շատ կ'օգտագործեն քունճութ եւ կտաւատ, որոնք կ'օգնեն մաքրելու մարմինը եւ երիտասարդացնելու մաշկը:

Չինացի կանայք ուշադիր կերպով կը պաշտպանուին անդրմանիշակագոյն ճառագայթներէն: Անոնք



կ'օգտագործեն SPF միջոցներ:

Աղջիկները կը փորձեն հեռու մնալ ճնշախտէն, քանի որ հորմոնները, որոնք կ'արտադրուին երբ մարդը Չղային վիճակի մէջ է, կը ծերացնեն մարմինը: Անոնք նաեւ կը փորձեն խուսափիլ սառելի: Մենք կը սիրենք գովազուցիչ ըմպելիքներ, բայց չինացի կանայք միշտ կը խմեն տաք ջուր:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՍԱՐՉԱԿԱՆ

«Ռեալը»՝ Սպանիայի Սուպերգավաթակիր



Մադրիդի «Ռեալն» ու «Աթլետիկոն» Սաուդեան Արաբիայի Զիրա քաղաքում տեղի ունեցած խաղում վիճարկեցին Սպանիայի սուպերգավաթը:

Հիմնական եւ լրացուցիչ ժամանակում դարպասի գրաւում չգրանցուեց: 115-րդ րոպէին սպանացի յարձակուող Ալվարո Մորատայի նկատմամբ վերջին յոյսի խախտման համար հեռացուեց «Ռեալի» ուրուգուայցի կիսապաշտպան Ֆեդերիկո Վալվերդէն: Սակայն թուային առաւելութիւնը մի քանի րոպէում կոլի վերածել արժենտինացի Դիեգո Սիմենոնէի գլխաւորած թիմին չյաջողուեց՝ 0:0:

11 մեթրանոցներն աւելի յաջող իրացրին ֆրանսացի Զինեդին Զիդանի գլխաւորած թիմի ֆուտպոլիստները՝ Դանի Կարվախալը, Ռոդրիգոն, Լուկա Մոդրիչին ու Սերխիո Ռամոսը չվրիպեցին:

«Աթլետիկոյի» առաջին հարուածը ձախողեց սպանացի կիսապաշտպան Սաուլը, երկրորդ հարուածը՝ կիսապաշտպան Թոմաս Պարթին (Գանա):

«Ռոմա» - «Յուվենտուս»՝ 1:2



Իտալիայի առաջնութեան 19-րդ տուրում «Ռոման» ընդունեց արտյան «Յուվենտուսին»: Իտալացի Մաուրիցիո Սարիի գլխաւորած թիմն առաւելութեան հասաւ 2:1 հաշուով:

Արդէն երրորդ րոպէին հաշիւը բացեց «Յուվենտուսի» թուրք պաշտպան Մերիս Դեմիրալը: 7 րոպէ անց պորտուգալացի յարձակուող Կրիշտիանու Ռոնալդուն դիպուկ իրացրեց 11 մեթրանոց հարուածը՝ կրկնապատկելով հիւրերի առաւելութիւնը:

«Ռոման» երկրորդ խաղակէստում կարողացաւ կրճատել հաշուի տարբերութիւնը, սակայն աւելին անել պորտուգալացի Պաուլու Ֆոնսեկայի գլխաւորած թիմին չյաջողուեց:

«Ռոմայի» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանն ազդրի վնասուածքի պատճառով բաց թողեց հանդիպումը:

«Յուվենտուսը» 48 միաւորով առաջին տեղում է եւ 2 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող Միլանի «Ինտերի» նկատմամբ: «Ռոման» 35 միաւորով 5-րդն է:

Իբրահիմովիչի Կոլը Նպաստեց «Միլանի» Յաղթանակին

Իտալիայի առաջնութեան 19-րդ տուրում «Միլանը» հիւրընկալուեց «Կալչարիին» եւ առաւելութեան հասաւ 2:0 հաշուով:

Հանդիպման հաշիւը 46-րդ րոպէին բացեց պորտուգալացի յարձակուող Ռաֆայէլ Լեաուն, իսկ 64-րդ րոպէին կրկնապատկեց 38-ամեայ շուետ յարձակուող Զլատան Իբրահիմովիչը, որն առաջին կոլը խփեց Իտալիայի առաջնութիւն վերադառնալուց հետո:

«Կալչարին» 29 Միաւորով 6-րդն է, «Միլանն» Ունի 25 Միաւոր եւ 8-րդ տեղում է:



Մարկոս Պիզելին Աւարտում է Ֆուտպոլիստի Կարիերան

Հայաստանի արտյան «Արարատ-Արմենիա» տեղափոխուած, Հայաստանի հաւաքականի նախկին կիսապաշտպան Մարկոս Պիզելին աւարտում է ֆուտպոլիստի կարիերան, տեղեկացնում է «Արարատ-Արմենիայի» մամուլի ծառայութիւնը:

Պրագիլիայում անհատական պարագմունքների ժամանակ ստացած վնասուածքի պատճառով Մարկոսը չաւելել էր բուժքննում է անցել Հայաստանում եւ պարզ է դարձել, որ ֆուտպոլիստին անհրաժեշտ է վիրահատութիւն, որից նա հրաժարուել է եւ որոշել աւարտել իր կարիերան:

Մարկոս Պիզելին «Արարատ-Արմենիայի» կազմում Հայաստանի առաջնութեան առաջիկայ հանդիպումներին պատրաստուելու նպատակով Երեւան էր ժամանել Յունուարի 7-ին:



Հայաստանի ազգային հաւաքականի կազմում 35-ամեայ կիսապաշտպանը մասնակցել է 68 հանդիպման՝ դառնալով 11 կոլի հեղինակ:

Մարկոս Պիզելին հանդես է եկել նաեւ Երեւանի «Արարատում», «Փիւնիկում», Դոնեցկի «Մետալուրգում», Կրասնոդարի «Կուբանում» եւ «Կրասնոդարում», Սաուդեան Արաբիայի առաջնութիւնը ներկայացնող «Ալ-Ռայեդում», ԱՄԷ-ի առաջնութիւնը ներկայացնող «Ալ-Շաբաբում», «Ալ-Ֆուշարիայում», նաեւ յունական «Քսանտիում»:

«Լիվերպոլը» Յաղթեց «Տոտենհեմին»

Անգլիայի առաջնութեան 22-րդ տուրում առաջատար «Լիվերպոլը» գերմանացի Յուրգեն Կլոպի ղեկավարութեամբ Լոնդոնում մրցեց «Տոտենհեմի» հետ, որի գլխաւոր մարզիչն է պորտուգալացի Ժոզէ Մուրինյոն:

«Լիվերպոլն» առաւելութեան հասաւ 1:0 հաշուով: 37-րդ րոպէին եգիպտացի յարձակուող Մոհամեդ Սալահի փոխանցումից յետոյ աչքի ընկաւ պրագիլացի յարձակուող Ռոբերտո Ֆիթիմիոն:

«Լիվերպոլը» 21 խաղից յետոյ 61 միաւորով գլխաւորում է մրցաշարային աղիւսակը եւ երկրորդ տեղում ընթացող «Լեսթեր Սիթիի» (22 խաղ) նկատմամբ ունի 16 միաւորի առաւելութիւն: «Տոտենհեմը» 8-րդն է՝ 30 միաւոր:

«Չելսին» ու «Մանչեսթեր Յունայթդը» Յաղթեցին, «Լեսթերը» Պարտուեց

Անգլիայի առաջնութեան 22-րդ տուրում «Լեսթեր Սիթին» հիւրընկալեց «Սաութհեմփթոնին» եւ պարտութիւն կրեց 1:2 հաշուով: Երկրորդ տեղում ընթացող «Լեսթեր Սիթին» երկու հանդիպում քիչ անցկացրած առաջատար «Լիվերպոլից» հետ է 13 միաւոր: Լոնտոնի «Չելսին» ընդունեց «Բարնլիին»: Անգլիացի Ֆրենկ Լեմպարդի գլխաւորած թիմը յաղթանակ տարաւ 3:0 հաշուով եւ 39 միաւորով չորրորդ տեղում է:

«Մանչեսթեր Յունայթեդը» նորուեզացի Ուլիս-Գունար Սուլշերի գլխաւորութեամբ տանը մրցեց յետնապահ «Նորվիչ Սիթիի» հետ եւ առաւելութեան հասաւ 4:0 հաշուով: «Մանչեսթեր Յունայթեդը» 34 միաւորով 5-րդ տեղում է, «Նորվիչ Սիթին» վերջինն է՝ 14 միաւոր:

ՇՆՈՐՉԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Հայ Մարմնամարզական Միութեան (Հ.Մ.Մ.) վարչութիւնը կու գայ իր խորին շնորհակալութիւնը յայտնելու Հ.Մ.Մ.ի հանդէպ ձեր ունեցած դրական մտեցումներուն համար: Մասնաւորաբար ամէն տարուայ Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան զոյգ տօներուն առթիւ ձեր ուղարկուած շնորհաւորական քարթերուն ձեր նիւթաբարոյական դրական պատասխանին ու նեցուկին:



Հ.Մ.Մ.ը ներկայիս ունի երկու ֆուլպոլի խումբեր՝ աւելի քան 40 մարզիկներով: Հ.Մ.Մ. Անճել (Angel) եւ Սահարա (Sahara) խումբերը, որոնք բաւական լաւ արդիւնքներ կու տան Ամերիկեան ֆուլպոլի լիկերուն մէջ, գրաւելով առաջին եւ երկրորդ տեղերը:

Մեր նպատակն է նաեւ յառաջիկային ունենալ սկաուտական շարժում մը: Ընդունեցէք մեր ջերմ շնորհաւորութիւնները Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան զոյգ տօներուն առթիւներով: Լաւագոյն մաղթանքներով՝ Լոս Անճելոսի Հ.Մ.Մ.ի վարչութիւն 1-15-2020

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Պաթոն Ռուժի մեր հաւատարիմ ընկերներէն ու «Մասիս» շաբաթաթերթի ընթերցող ու քաջալերող ընկեր Պօղոս Մուլթաֆեան անհանգստութեան պատճառով տեղափոխուելէ ետք հիւանդանոց, այժմ կը բոլորէ հանգստեան շրջան մը իր բնակարանին մէջ: «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը շուտափոյթ ապաքինում կը մաղթէ մեր սիրելի ընկերոջ:

ԱՊԱՔԻՆՄԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Սիմա Կիրակոսեաններ շուտափոյթ ապաքինում կը մաղթեն ընկեր Պօղոս Մուլթաֆեանին որ այժմ հանգստեան շրջան մը կը բոլորէ իր բնակարանին մէջ: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Թուրքիան եւ Ազգային Փոքրամասնութիւններ

Շարունակուած էջ 6-էն

հրկիրգում...

վար Իհսան Նուրի փաշայի գլխաւորութեամբ, երբ «Պատրիարքաները» մեծ դեր խաղացին իրենց «Խոյպուն» կուսակցութեամբ եւ օգնութիւն ալ ստացան ՀՅԴ-էն՝ կոմսի միջոցով. Նուրի փաշա այդ շրջանը անկախ Քրտական պետութիւն հռչակեց: Սակայն Աթաթուրք, օղուժով օժանդակուած հզոր ջոկատներով յաջողեցաւ անոր ալ վերջ տալ: Թրքական զօրքը այնուհետեւ այրեց այդ շրջանի քրտական զիւղերը եւս եւ տեղահան ըրաւ ժողովուրդը:

Այս բոլորով հանդերձ, քիւրտերը կը շարունակեն իրենց պայքարը. անոնք Խրիմեան Հայրիկին «երկաթէ շերեփ»ը ունին իրենց ձեռքերուն մէջ, եւ էրատդան կը ջանայ վերջ տալ անոնց պայքարին: սակայն այժմ ժամանակները փոխուած են: Այո՛, համայն աշխարհը այդ իրողարձութիւնները կը դիտէ, բայց մինչեւ ե՞րբ:

Կը թուի, թէ յոյները ամէն ինչ կորսնցնելէ եւ զիջելէ ետք, նոյնիսկ իրենց պապենական իրաւունքներուն մասին շատ բան չունին ըսելիք, բացի անկէ, որ ժամանակ առ ժամանակ խնդիրներ կը ծագին իրենց Պատրիարքական աթոռին մասին: Իսկ ինչ կը վերաբերի մեզի՝ հայերու, ապա թուրքիա մնացած փոքր հայկական համայնքը կաշկանդուած է ամէն տեսակէտով եւ նոյնիսկ իր կրօնական հարցերը չի կրնար ազատօրէն լուծել: Այնուհանդերձ, մենք կը մնանք եւ պիտի մնանք պահանջատէր մեր իրաւունքներուն եւ մեր արդար Դատի լուծման:

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԹԱԳՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ
Թագուհի Նիկողոսեանի մահուան առաջին տարուայ առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 19 Յունուար 2020ին Փասադինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd, Pasadena CA 91107:
Խնդրողներն են՝
Տէր եւ Տիկ. Վահէ եւ Սեդա Նիկողոսեան եւ զաւակունք
Տիկ. Անահիտ Պալեան եւ զաւակունք
Տիկ. Սիլվա Նիկողոսեան եւ զաւակունք

ՀՈԳԵՅԱՆԳԻՍ



ԼՈՒԼՈՒ (ԽԱՅԵԱՆ) ՖԵՐՄԱՆԵԱՆ
Լուլու (Խայեան) Ֆերմանեանի մահուան քաներորդ (20) տարելիցին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 26 Յունուար, 2020-ին, Ս. Պետրոս Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ, 17231 Sherman Way, Van Nuys յաւարտ Ս. Պատարագի:
Հանգուցեալին յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:
Սգակիրներ՝
Տէր եւ Տիկին Արա Ֆերմանեան
Վիզէն Գուլումճեան

Ցաւակցութիւն

Խոր ցաւով տեղեկացանք մահը Լոս Անճելըսահայ համայնքի ծանօթ բժիշկներէն Տօթթ. Զաւէն Արսլանեանի մօր՝ Սոնա Արսլանեանի մահը:
Այս տխուր առթիւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրական ու վարչական կազմերը կը յայտեն իրենց խորազգաց ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր պարագաներուն:
«ՄԱՍԻՍ»



Summer Trip to Armenia with Norayr Daduryan
13-28 July, 2020

Highlights:
All major Yerevan art and history museums, Sardarabad war memorial, Holy city of Etchmiadzin and surrounding historic sites, Garni temple, Lake Sevan, Tsaghkadzor ski-lift, express train trip to Gyumri, Amberd castle, sacred sites of Khor Virap and Oshakan, medieval monasteries of Haghartsin, Kecharis, Geghard, Noravank and Hovhannavank, charming cities of Dilijan and Goris, winery tours, ancient Vardavar celebration, and two days in mountainous Artsakh.

Cost per person (double occupancy): \$3395 + tax

Trip includes:
Round-trip air fare from LAX, full transportation and transfers in air-conditioned busses, breakfasts, select lunches and dinners as specified in the itinerary, 4-star accommodation (double occupancy), entrance fees for all sightseeing destinations, museum tour guides (Armenian and English), farewell dinner with live music and dance.

Space is limited. For more information, contact:
NorayrDaduryan@gmail.com
or (800) 826-7960- Carlo



Delve deeper and discover more with an award-winning Armenian teacher as your guide in Armenia.

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ԱՄԲՈՂՈՒԹԵԱՄԲ ԲԱՐԵՉԱՐԴՈՒԱԾ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

www.massisweekly.com
Updated Every Friday



Մարդահամարը տեղի պիտի ունենայ այս Գարնան

Մարտի կեսին սկսեալ, կրնանք պատասխանել ինն պարզ հարցումներու, որպէսզի կարենանք օգնել տեղեկացնելու, թէ մեր համայնքներուն մէջ, յաջորդ տարի դրամը ինչպէ՛ս պետք է ծախսուի:
 Բոլոր հարցումները պաշտպանուած են եւ գաղտնի:

Իմացէք աւելին՝ այցելելով CaliforniaCensus.org կայքը: